

Михаилу Ивановичу
Гусеву

491.99-8

U-65

1922 р.

15.02.2013

7369

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 04 MAY 2013

491-99-8

Ա-65

428
98-67

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑ

Բ. ՏԱՐԻ

Կազմեցին՝

Գ. Եղիլյան, Ա. Մեհրաբյան, Տ. Ռաժմանյան,
Ա. Տերտերյան, Հ. Տեր-Միքայելյան։

8728
0128



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — № 20.

Յերեվան—1922.

1. Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,
Արևն արդեն ծագել է.

Վեր կաց փափուկ քո անկողնից,
Հավը վազուց խոսել է:

Վեր կաց, նայիր պատուհանից

Դեպի հեռու մեր դաշտեր.

Ախ, թե ինչպես մեղմ գեփյուռից

Սրվսրվում են լիք հասկեր:

Դե, շուտ վեր կաց, ել մի քնիր

Ծուլլ ու անհոգ անկողնում.

Առ գրքերդ, առաջ գիմիր,

Վոր բախտ գտնես դու կյանքում:

2. Փոքրիկի յերազը

Մի աղա սիրուն, փոքրիկ, մանկահաս, գիշերվա քնին տես-
նում է յերազ: Առափոտը վաղ քնից զարթնելով՝ վազում է պատ-
մում մայրիկին շուտով: Դեռ կեսը չհասած նա մոռանում է,
գիմում է մորը և հարցնում է. «Հետո ի՞նչ յեղավ, առա, մայ-
րիկ ջան»: Մայրը ժպտալով՝ ասում է նրան. «Յերազդ վնդա-
ղից գիտեմ, բալիկ ջան»: Տղան զարմանքով է այժմ հարցնում.
«Ինչպես չգիտես: Չե՞ վոր յերազում դու ինձ հետ եյիր, դու այն-
տեղ եյիր»:

— Վայ, միթե չեք ճանաչում իմ մայրիկին. նա, ելի՛, վոր
ամենից լավ մայրիկն է:

— Անունն ասա, անունն ի՞նչ է:

— Մայրիկ է, մայրիկ...

3. Լուսաբացին

— Ծուղրուղո՛ւ.

աքլորը զիլ կանչեց թառին:

— Ճիկ-ճիկ, ճիկ-ճիկ.

զարթնեց միջուկ ծիտը ծառին:

— Ծուղրուղո՛ւ.

խոսեց ծեղին յերկրորդ բերան:

— Հո-հո, հո-հո-հո.

նախիրն արդեն հանդը տարան:

— Ծուղրուղո՛ւ.

լույսը բացվեց յերրորդ կանչին:

— Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ.

նստեց նանը տեղի միջին:

4. Մայրիկը

Մի աղքատ կին ձեռքի աշխատանքովն էր պահում իր վորբե-
րին: Մի կիրակի որ ամենից փոքր յերեխային հետն առած՝ նա
գնում էր վաճառանոց, վոր այնտեղ վաճառի ձեռագործները: Պա-
տահմամբ յերեխան մորից յետ է ընկնում, յամբոխի մեջ մոլորվում
և սկսում է լալով այս ու այն կողմն ընկնել:

— Ինչո՞ւ յես լաց լինում, հարցնում են մարդիկ կարեկցա-
բար, ո՞ւմ ես վորոնում:

— Մայրիկիս եմ ուզում, պատասխանում է յերեխան հեկե-
կալով:

— Ո՞վ է քո մայրիկը, ի՞նչպիսի կին է:



5. Վատու

Փխիկ, փխիկ, դու չար փխիկ,
Շատ սիրուն ես, խորամանկ ես,
Մետաքսապատ թաթեր ունես,
Սուր յեղունգով մատներ ունես:

Ականջներդ շուտ են լսում,
Մեծ աչքերդ միջուկ փայլում,
Յերկար բեխերդ վոլորած,
Խեղճ մկներին մահ ես տալիս:

Քո ընկերիդ յերբ տեսնում ես,
Պոչդ այս ու այն կողմն ես շարժում,
Մեջքդ ծալում, կռացնում,
Աչքերդ փակ մրուռացնում:

Բայց թե հանկարծ մի խեղճ մկիկ
Մի անկյունից դուրս է ընկնում,
Քո պողպատե թաթիկներով
Դիվին խփում ես, սպանում:

6. Մոլլի գրագրը

— Յես քեզ ջուրը կը տանեմ, ծարավ յետ կը բերեմ, ասաց մոլլան հարևանին:

— Չես կարող:

Նրանք գրագ յեկան և գնացին: Յերբ գետին հասան, մոլլան ասաց:

— Այս չեղավ, այս չեղավ. յերբ վերադառնանք, յես պիտի ասեմ՝ չխմեցիր, դու պիտի ասես՝ խմեցի. ուր ե մեր վկան, վոր հաստատի:

— Յերբ այդպես ե, գնանք, վկա բերենք, ասաց հարևանը: Նրանք վերադարձան. մի մարդու պատահելով, մոլլան կանգնեց, հարցրեց հարևանին:

— Մենք գետը գնացինք:

— Գնացինք:

— Դու ջուր խմեցիր:

— Վոչ:

— Ուրեմն յես տարա, տուր գրագս:

Հարևանը միայն նոր գլխի ընկավ, վոր մոլլան իրեն ջուրն ե տարել, ծարավ յետ բերել:

7. Մայրապետը վորդի

Մի յերեխա, փողոցի միջով վազելիս, ընկավ կառքի տակ. առնիք անցավ նրա վրա վրայով և ջարդեց: Խեղճ յերեխային վերցրին և տուն տարան. նրա մայրը տանը հիվանդ պառկած եր և հենց վոր լսեց փողու լացուկոծը, վախից ուշաթափվեց:

Յերեխան իսկույն կտրեց ձայնը և մինչդեռ ուղղում ու կապում եյին վորտը, նա ամենևին ձայն չհանեց:

— Միթե դու ցավ չես գգում, հարցրեց նրան բժիշկը:

— Ո՛հ, սաստիկ, հառաչեց մանուկը, բայց յես չեմ ուզում, վոր մայրիկս իմանա այդ, նա շատ կը վշտանա:

Մայրը իր վորդուց նամակ ստացավ, հարոտած սիրտը վեր ու վայր յեղավ. վորդին հեռու եր՝ ցտար քաղաքում, ծառայում մի տան, դպրոցում սովորում:

Նայում ե թղթին, սև-սև նշաններ,

Բայց այդ գրերի միտքը չգիտեր.

Տղան ինչ ե գրել, պետք ե իմանար,

Բայց իրանց տանը կարդացող չկար:

Դուրս յեկավ փողոց, մի քարի նստեց,

Գյուղի տերտերի վորդուն հանդիպեց.

Յեվ նրան կանչեց. «Տերտերի տղա,

Մոտս յեկ, ապրես, ես գիրը կարդա»:

9. Պապը և թոռնիկը

Պապը սաստիկ ծերացել եր, նրա աչքերը լավ չեյին տեսնում, ախանջները ծանրացել եյին, նրա ձեռներն ու վրաները ծերությունից դողդողում եյին, այնպես վոր՝ գգալը բերանը տանելիս, կերակուրը կաթկըթեցնում եր:

Այս բանը դուր չեր գալիս նրա վորդուն ու հարսին: Ծերին իրանց հետ հացի չեյին նստեցնում, այլ մի անկյունում առանձին տեղ եյին տալիս հաց ուտելու:

Մի անգամ, ճաշի ժամանակ, ծերի ձեռները դողդողացին, կավե ամանը վայր ընկավ և կտրվեց: Ավելի ևս բարկացան հարսն ու վորդին խեղճ ծերի վրա և դրանից հետո փայտի ամանով եյին կերակուր տալիս նրան:

Ծերունին մի թոռնիկ ուներ: Մի որ մանուկը, հատակի վրա նստած, տաշեղներից ինչ վոր բան եր շինում:

— Այդ ինչ ես շինում, վորդի, հարցրեց նրան մայրը:

— Փայտե աման եմ շինում, մայրիկ, վոր յերբ դու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր տամ ձեզ, պատասխանեց մանուկը:

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամոթից կարմրեցին: Նրանք այնուհետև սկսեցին ծերին շատ պատվով պահել:

10. Չուրը փախաւ

Տանտիկինը Չուրը լցրեց կաթսայի մեջ, դրավ կրակին:

Քանի կաթսան տաքացավ, Չուրը սկսեց շոքել, անհանգստանալ, շուռ ու մուռ յեկավ, տակն ու վրա յեղավ: Վեր-վեր երթոչում, քրթքրլթում եր, մըրթմըրթում եր, փշտացնում եր:

Կովում եր ամանի հետ, թքում եր, հրում, ժաժ եր տալիս, վոր կրակի վրայից շուռ տա նրան ու ինքն ազատվի: Չկարողացավ: Տեսավ՝ կաթսան շատ պինդ է նստել կասկարային, ավելի բարկացավ, փրփրեց վեր կացավ, սկսեց գոլորշի դառնալ ու փախչել դեպի վեր:

Լավ է, վոր տանտիկինը վրա հասավ:

11. Խուլի այծերը

Մի խուլ մարդ յերեք այծ ունեւ. մեկի յեղջուրը կոտրած եր: Ինչպես է լինում, մի որ այծերը կորչում են, տերն ել ընկնում է այս ու այն կողմը՝ այծերը գտնելու:

Նա պատահում է մի ուրիշ խուլ մարդու, վոր վար եր անում, ու հարցնում է նրան.

— Բարի աջողում, յեղբայր, այծերս չեմ տեսել:

— Լավ է, այսպես ցանեմ, ձեռք մի կողմ թափ տալով՝ պատասխանում է վար անողը:

Այծատերը կարծում է, թե ցույց տված կողմն են գնացել այծերը, ասում է.

— Ճիշտ եմ ասում, թե գտա այծերս, յեղջուրը կոտրածը քեզ եմ տալու:

*
* *

Ասում է ու գնում վորոնելու. յերբ գտնում է այծերը, ուրախ-ուրախ առաջն արած՝ քշում է վար անողի մոտ և ասում.

— Շնորհակալ եմ, յեղբայր, այծերս գտա, առ այս այծն ել քեզ, ասում է ու յեղջուրը կոտրած այծը քշում է դեպի վար անողը:

— Յես չեմ կոտրել յեղջուրը, յես տեղյակ չեմ, զարմանքով ասում է վար անող խուլը:

— Ի՞նչ ես խոսում, ասում է այծատերը. յես այս եմ խոստացել, վոր մեռնես ել, մյուս այծերից տվողը չեմ:

— Չե, յես չեմ կոտրել, բարկացած ասում է մեկը:

— Չե, յես այս եմ խոստացել, բարկացած պատասխանում է մյուսը:

Մա նրան, նա սրան, բանը հասնում է տուր ու դմբոցի:

*
* *

Վերջը գնում են դատավորին գանգատ: Գյուղի մոտ սրանց պատահում է մի պառավ, վոր նույնպես խուլ է լինում և հարսի ձեռից փախած:

— Այ նանի, ասում է այծատերը, իմ այծերը կորել էյին, գնացի ես մարդուն հարցրի, սա ել տեղը ցույց տվավ, յեղջուրը կոտրած այծը տալիս եմ, չի վերցնում. յես եղ եմ խոստացել, վոր մեռնի ել մյուս այծերից տվողը չեմ:

— Այ նանի, ասում է արտատերը, ես մարդը յեկել ասում է, թե այծիս յեղջուրը դու յես կոտրել. յես ձեզ հավատացնում եմ, վոր այդ բանից ամենեին տեղեկութուն չունեմ:

— Ե՛, վորդիքս, պատասխանում է պառավը, ինչ ել լուզում է լինի, յես ձեր խնդիրքը չեմ կարող կատարել. քանի վոր մեր չար հարսը տանն է, յես են տունը վոտ կոխողը չեմ:

12. Մուլի մեղրը

1.

— Ի՞նչ լավ մեղր է, ասաց մուլան և բերանը ջրով լցվեց: Նա կանգնեց մրգավաճառի խանութի առաջ, պարկից հանեց հացը և այնպես ձևացրեց, թե մեղրի մեջ է թաթախում:

Մուլան մեղրին նայելով, ախորժակով հացը կերավ և ուզեց հեռանալ:

— Մուլա, փողը, մուլա, փողը, ձայն տվեց մրգավաճառը:

— Ի՞նչ փող, հարցրեց մուլան:

— Կերածդ մեղրի փողը:

— Չե վոր յես քո մեղրից չկերա:

— Իսկ յեթե իմ մեղրը չլիներ, կարո՞ղ էյիր դու քո հացն այդպես լավ, այդպես ախորժակով ուտել, ասաց նա:

Բանը հասավ դատի:

Դատավորը վճռեց, վոր մոլլան պետք է փողը տա:

Մոլլան յերկու մատը իրար քսելով՝ ձեացնում եր, թե փող է տալիս:

— Ա, այս մեկ, այս յերկու, յերեք...

— Ի՞նչ ես անում, մոլլա, փող տուր, ասաց մրդավաճառը:

— Այն տեսակ մեղրին այս տեսակ փողն ել բավական է, պատասխանեց մոլլան:

Այն ի՞նչն է՝ Վոյ ցորեն եւ, փոյ գարի,
Վոր հողագործն ինձ ցանի,
Առանց ձեռի հունձած եւ,
Առանց կրակի քիսած եւ.
Թունիք, ջաղաց տեսած յեւ,
Ձեր ամենից սիրածն եւ:

13. Աշուն

Դաշտ ու այգի դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ մերկացան,
Թռչունները յերամ-յերամ
Մեր աշխարհից հեռացան:

Որը մուսյլ, ցուրտ ու տխուր,
Բարակ անձրեւ է մաղում.
Մեզն է պատել սար ու բլուր,
Ել մարդ չկա գաշտերում:

Չար սգոսովը ծառի վերից
Չմրան յերգն է կռկռում,
Մարդ, անասուն տղւն ու բնից
Ծերուկ հյուրին սպասում:



14. Ուշկալ ծառա

Մի պարոն մեկ անփորձ ծառա ունեւ: Մի որ պարոնը քնելիս ծառային պատվիրեց, վոր զգուշ կենա և նայե, վոր աղմուկ չլինի:

Մի փոքր ժամանակ վոր անցավ, ծառան լսեց, վոր չախկ չուխկ՝ մի ձայն է գալիս սենյակից:

«Այս հիվ ե, տեր Աստված, այս ի՞նչ է», մրմռաց ծառան ինքն իրան. յեկավ, վոր գանի պարոնին անհանգիստ անողին: Նա տեսավ, վոր այդ աղմուկ անողը սենյակի պատից կախ արած ժամացույցն է:

«Ն՛յ, ձայնդ», հրամայեց ծառան ժամացույցին կամաց ձայնով բայց ժամացույցը չլսեց նրան:

«Ձայնդ կտրիր, ասում եմ, եյ», բարկացավ ծառան, բայց ժամացույցը շարունակեց չախկ չուխկը:

Չայրացավ ուշկալ սպասավորը, պատից վայր բերավ ժամացույցը, մի քար վեր առավ և տուր թե կը տառ, ջարդ ու փշուր արավ:

Այս անգամ ժամացույցը ձայնը կորեց, իսկ ծառան ուրախա-
նալով ասաց.

— Ահա այդպես կը հանեմ հողիդ ու սուս կը կացնեմ հմ... դե,
քնա հիմա, վորտեղ քոնն ասես, իմն ել այնտեղ ասա »:

15. Պարտիզպանն ու իր վորդիքը

Մի ծերունի պարտիզպան շարունակ խրատում եր իր վորդի-
ներին, վոր աշխատասեր լինեն, բայց վորդիները նրան ականջ
չէյին դնում: Յերբ ծերունին գգաց, վոր մահը մոտ ե, կանչեց վոր-
դիներին ու ասաց.

— Միրելի գավակներս, իմ ունեցած շունեցածս այս տունն
ու պարտեզն ե: Ուրիշ բան չունեմ, վոր ձեզ թողնեմ: Բայց
պարտիզում գտնձ կա թաղած: Փորեցեք և անշուշտ կը գտնեք:

Ծերունու մահից հետո վորդիներն սկսեցին փորփրել պար-
տեզը: Փորեցին, փորեցին, փոշինչ չդտան. բայց հետևյալ տարին
պարտեզի ծառերն առատ պտուղ տվին: Այդ ժամանակ միայն նը-
բանք հասկացան, թե ի՞նչ գտնձի մասին եր ասում հայրը: Յեզ այ-
նունետե սկսեցին ջանասիրությամբ աշխատել ու շուտով մեծ
հարստության տեր դարձան:

16. Մայրիկը

Ով ե ձեզ արթուն

Թե քնած պահուն

Միրում, փայփայում,

Ձեր մասին հոգում:

— Մայրիկը սիրուն:

Հոգնած ու անքուն

Այն ով ե նստում

Միշտ ճանի մոտին,

Որորում բալին:

— Մայրիկն անդին:

Այն ով ե յերգում,

Հեքյաթներ ասում,

Տալիս խաղալիք,

Մրգեր անուշիկ:

— Մայրիկը բաղբրիկ:

Իսկ յերմ... էր,
Միրուն յերեխեք,
Անհանդիստ ու չար,
Ձեք տալի գաղար:

Ցերեկը թաքուն,
Գիշերըն անքուն
Այն ով ե լալի,
Տխուր վայ տալի:
— Մայրիկը բարի:

Վորդին փոր քունում անհանդ յեփի, մոր լավությունից չի
անցնի:

17. Կույրը և կաթը

Կույր ծնված մի մարդ հարցրեց մեկին.

— Ի՞նչ գույն ունի կաթը:

— Կաթը թղթի պես սպիտակ ե, պատասխանեց մյուսը:

— Ուրեմն, թղթի պես ձեռքումը ծալվում ե, հարցրեց կույրը:

— Վնչ, պատասխանեց նա, կաթը բամբակի պես սպիտակ ե:

— Ուրեմն կաթն ել բամբակի պես փափուկ ու թեթև ե:

— Վնչ, յեղբայր, կաթի սպիտակութունը թե ուզում ես
հասկանալ, քեզ որինակ սպիտակ հավկիթը:

— Նշանակում ե՞ կաթն ել հավկիթի պես շուտ ե կոտրվում:

— Վնչ, վոչ, կաթը վոչ կոտրվող ե, վոչ ել պատուփող, այլ
ձյունի պես սպիտակ ե:

— Ե՛, հասկացա՞ն, ասաց կույրը, ուրեմն կաթն ել ձյունի
պես սառն ե:

Այսպես կաթի սպիտակութունը կույրի համար անհասկանալի
մնաց:

18. Մանկական հեքյաթ

Գնացի ջաղաց: Ջաղացպանն ինձ ուղարկեց փայտի: Ման յե-
կա, ման յեկա, շատ փնտրեցի, փայտ չգտա: Վերջը գտա մի կոճղ:
Խփեցի, խփեցի, շատ խփեցի վոտքով ու քարով, դուրս չեկավ
տեղիցը:

— Այ կոճղ, ի՞նչ քաջ ես:

Ասաց. — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յե կացինն ինձ կտրուի:

— Այ կացին, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յե դարբինն ինձ ծեծում:

— Այ դարբին, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յե յերկինքն ինձ տանում:

— Այ յերկինք, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յե ամպը յերեսս ծածկում:

— Այ ամպ, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, անձրենն ինչո՞ւ յե մեջիցս վայր թափվում:

— Այ անձրեն, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յեմ գետնին թափվում:

— Այ գետին ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինձ վրա ինչո՞ւ յե խոտ բնում:

— Այ խոտ, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, տավարն ինչո՞ւ յե ինձ աբածում:

— Այ տավար, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յե դայլն ինձ ուտում:

— Այ դայլ, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, շունն ինչո՞ւ յե վախցնում ինձ:

— Այ շուն, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ յե ծեծում ինձ պառավը:

— Այ պառավ, ի՞նչ քաջ ես: — Թե վոր քաջ եմ, ինչո՞ւ ինձ անից չի վախենում մուկը:

19. Պյուղացու ձին

Մեկը շուկայում ձին ծախեց վեց թումանի: Գնողները յերեք հոգի ելին. նրանցից մինն ասաց.

— Այ մարդ, ձեզ շատ թանկ ծախեցիր. ի՞նչ կը լինի, մի թումանը վորդոցդ արեին ինձ բաշխես:

— Բաշխեցի, ասաց մարդը սրտաբաց:

— Տեսնում եմ, վոր շատ բարի մարդ ես, բեր՝ յերկու թումանն ել ինձ բաշխիր, մեջ մտավ յերկրորդը:

— Յերկուսն ել քեզ բաշխեցի:

— Դե, վոր այդպես ե, յեղբայր ջան, կյանքդ յերկար լինի, յեկ՝ մի յերեք թուման ել ինձ բաշխիր, խնդրեց յերրորդը:

— Յերեքն ել քեզ բաշխեցի:

— Հապա քեզ ի՞նչ մնաց, ծիծաղելով հարցրեց մի չորրորդը:

— Ել ի՞նչ պետք ե մնա, ինձ ել՝ իմ ձին, ասաց մարդը:

Վարպետ աղվեսը մի որ չափչփորեց դաշտ ու ձոր, տուն գառնալու ժամանակ ճամփին ընկած մի սպիտակ թուղթ նկատեց. առնելով, ծոցը դրեց ասելով. «Սա ծոցումս թող մնա, գուցե մի որ պետքը գա»:

Հենց այս խոսքը բերանին տեսավ՝ յեկավ դայլ քեռին:

— Բարե, բարե, դայլ ընկեր, ի՞նչ ես այսպես մոլորել, սոված հո չե՞ս, սիրելի. հը՞, ինչի՞ չես ձայն տալի:

— Անտեր մնա այսպես կյանք, ամեն որ ցավ ու տանջանք, այս հինգ որ ե, ճիշտ հինգ որ, բան չեմ կերել մի կտոր. ի՞նչ կը լինի՝ մտածես, սովի ձեռքից ազատես:

— Վայ, քուսանամ, դայլ ընկեր, ի՞նչ վատ որի յես յեղել. հիմի ել վոր քեզ չողնեմ, լսողներն ի՞նչ կասեն:

Հազար ու մի հնարքով, անասելի տանջանքով, մարդ ու կաշառք, միջնորդներ մեջ եմ գցել ու առել մեծ իշխանից հրաման, վոր այսուհետ անխափան այս գյուղերի աներից ամիսը մի հավ տան ինձ, բայց սոված չեմ յես հիմի, գնա գյուղն այն դեմի, տար իմ թուղթը, թող կարդան՝ հավեր ժողվեն ու քեզ տան:

— Դե, տուր թուղթը իշխանի, տանեմ՝ փորիս դեղ անի:

— Առ, ընկեր ջան, թուղթը տար, շուտ գնա, իմ հարկն առ:

Թուղթը ձեռին նա հպարտ՝ գյուղը մտավ լուռ, հանդարտ:

«Լսեք, մարդիկ, տանուտեր, գղիք, քյոխվա ու տերտեր, գյուղի շրջեր պատվական, մեծ իշխանի հրամանը. այ, գրված ե այս թղթում, վոր անխափան ամեն տուն մի հավ տա ինձ ամսական»:

— Ի՞նչ իշխան, ի՞նչ հրաման, ասին մարդիկ ու յեկան՝ առան մահակ ու կոպալ, ել մի հարցնի քեռու հալ. ջներն ել այս աղմուկից դուրս վազեցին բակերից, դայլին մի լավ գզեցին, տարան գյուղից հանեցին:

«Տես, այսպես ել մարդ ու շուն. իշխանին ել չեն լսում»:

Մեկ ել աղվեսը դեմից դեպի քեռին ե գալիս.

— Իմ բաժինը, դայլ ընկեր, ի՞նչ ես այդպես չափ ընկել:

— Տո, ի՞նչ բաժին ու ի՞նչ հարկ, գյուղում յեղա խայտառակ. պատիվ տալու փոխարեն, քիչ մնաց վոր սպանեն:

— Ի՞նչ... քեզ ծեծեց գյուղացին... բա թղթին ի՞նչ ասացին:

— Այ անիծվի այդպես գյուղ, վոր ահ ունեն, վոր յերկյուղ: Հազար մարդ կա, հազար շուն, բայց բոլորն ել անուսում:

Մեկը չեղավ, վոր կարդա, հասանելիք հարկը տա:

21. Հանելուկ

Մի տուն ունենք, տան նման չի.
Գետի ափին մեծ ժայռի տակ,
Կրկրգած է մեն-մենակ.
Գիշեր-ցերեկ բայդուշի պես
Ձայն է հանում, դռում աշտպես.
Թրըխկ, չրըխկ,
Վըշտ, ճըշտ:

Առուն բարձրից ցած է թռչում,
Պատը ծակում, միջոքն անցնում.
Հատակումը դղրդոց է,
Շրրրփոց ու թրրրիկոց է:

Տան մեջ յերկու ուժեղ դազան,
Մինը տակին՝ մյուսը վրան,
Առյուծի պես մոնչում են,
Իրար ըսեխ կրծոտում են...

Սրանք մարդ չեն, վոչ արջ, վոչ գայլ,
Ինչ էլ վոր տաս, քիչ է դարձեալ.
Հարամի յեն խալառ քաղցած,
Ել չեն լսում վոչ խոսք, վոչ լաց:

Դուրս են մղում իրանց փորից
Կերակուրը փոշի դարձած...
Այժմ ասեք, այդ ինչ տուն է,
Վոր մինչ այսօր էլ կանգուն է:

22. Ուղտն ու եղը

1.

Ասում են, վոր մի ժամանակ, ել չգիտեմ՝ սուտ թե շիտակ,
Ճամփից մտարկ մի անտառում գյուղից փախած ել եր ապրում:
Մարդուց հեռու, բեռից ազատ, սիրտն ուրախ, ինքը հալարա քեֆ
Եր անում մեն ու մենակ, մուցած փախան, գոմ բու մարագ:

Որվան մի որ այս եղի մոտ հոգնած, դադրած, նիհար, փոշոտ,
այլանդակ ու յերկարավիզ մի անգլին ուղտ է գալիս:

— Գալդ բարի, ծուռտիկ ախպեր, նստիր, շունչ առ, ինչ ես
կանգնել. ինձ էլ վաղուց մի պատվական ընկեր եր պետք ճիշտ
բեզ նման:

— Շնորհակալ եմ, զուռն ախպեր, անտեր բեռից եմ յես
փախել:

— Լավ ես արել, յես իմ հոգին, ինչո՞ւ տանջվենք բեռան
տակին:

Ու այն որից անտառի մեջ ընկեր յեղան ուղտն ու եղը. և
շատ որեր հոժար, սիրով ապրում եյին քեֆ քաշելով:

2.

Մի որ եղը մեր գերացած իր ընկերին յեկավ, ասաց.

— Ծուռտիկ ախպեր, վաղուց է վոր տաղ չեմ ասել. կուզեմ
այսօր անուշ խնդամ, ձայնս զլեմ. մի տաղ ասեմ, տրտինդ անեմ:

— Վայ, ինչ ասիր, զուռն ախպեր, այդ ինչ գեշ բան ես
մտածել: Ախր չե՞ վոր ձայնդ լսեն, մարդիկ կը դան, մեզ կը տա-
նեն. արի, լսիր խոսքը ծերի, թե չես ուղում, դառնանք գերի.
տաղ ու տրտինդ չեն հարկավոր, թող այդ միտքդ վտանգավոր:

Բայց իշուկի քեֆը տեղն եր, ինչ էլ լինեք, յերգել կուզեք.
ախանջ չարավ ընկեր ուղտին. վիզը ձգեց, ձայնով ուժգին տաղը
զլեց: Այդ ժամանակ մոտիկ ճամփին, անտառի տակ հանգստանում
եր մի քարավան: Այդ քարվանի մարդիկ յեկան, անտառ մտան,
եղին, ուղտին շուտով գտան, բռնոտեցին:

Ու քիչ հետո փշոտ ճամփով բեռան տակին տնքանքալով
ուղտն ու եղը տխուր, տրտում դեպի քաղաք եյին գնում:

3.

Ամառվա տաք այրող կեսօր, ճամփան քարոտ, փոշոտ
ուժ կը մնա ել եղի մոտ. գերի ընկած, սիրտը վշտոտ, մի քիչ
անց, ճամփի միջին ուժը հատավ, փուլեց գետին: Հրհրեցին գե-
սից-դենից, քաշքշեցին զլեից, պոչից, հնար չեղավ: Վերջը բերին
խեղճ ծուռտիկին չոքացրին ու իշուկին իրա բեռով ուղտի մեջքին
դրին զոռով:

չլսեց ծերի խոսքին, փորձանք բերավ իրենց գլխին:

4.


Այգալես անցան սարեր ու ձոր, քարոտ ճամփեք վոլոր-մոլոր, շատն ու քիչն ել հայտնի չե, վերջը հասան մի կամուրջի: Այստեղ ուղտը ձայնով կամաց եշ ընկերին ցածից ասաց.

— Մի ինձ լսիր, գոռան ախպեր, վաղուց ե վոր յես չեմ պարել, հիմի վոր յես այս կամրջի վրա պարեմ՝ հո չի՞ փլուչի:

— Ծուռտիկ ախպեր, խելքի արի, ով ե լսել, ուղտը պարի: Փորձանք կը գա, մտքիցդ հան, թող վողջ հասնենք մեր ոթեան:

Բայց ուղտն իր բանը գիտեր, փոխադարձն անել կուզեր. վոտը դրավ այն կամրջին ու սկսավ իր վերվերին: Ե՛ն ինչքան լեզու թափեց, ուղտը կարծես հեշ չլսեց. մին ել շըր՝ մփ... մեր խեղճ եշին տեսան ձորի ջրի միջին:

Եշն ի՞նչ գիտե, նուշն ի՞նչ ե:



23. Զաղացպանի ննջարանը

Յերեք չորս հատ ջաղացաքար կարգով շարված պտտվում են, իրանց ձանեզ գըռգըռոցով ամբողջ շենքը դրդրդղացնում են, չափախանների չըխչըխկոցից մարդի ախանջ խլանում ե. իսկ ջաղացչանն ալրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե: Բայց ջաղացը յեպանն ալրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե: Բայց ջաղացը յեպանն ալրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե: Բայց ջաղացը յեպանն ալրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե:

24. Փիսոն

Փիսոն, փիսոն մլավան,
Թավրիզ թողեց, փախավ վան,
Լեզուն թաթխան, յերկար պոչ,
Ինչ վոր ուզեց, ասին՝ վոչ:

Փիսոն գնաց գողեգող.
Փորը դատարկ, սիրտը դող...
Դունչը մեկնեց կովկթին,
Շերեփն իջավ ճակատին:

25. Սերոբը

— Սերոբ, վորդիս, ասում ե հայրը, գնա արշինը բեր, կտավը չափենք:

— Ե՛, բան չունիս, հայրիկ, պատասխանում ե Սերոբը, ինչ նեղություն տամ հարեանին: Յես գիտեմ, վոր մեր կատուն պոչից սկսած մինչև ախանջի ծայրը մի արշին կը լինի: Ել արշինն ի՞նչ կանենք:

— Սերոբ, Սերոբ, ասում ե հայրը, ապրես դու, մի գնա հարեանից գրվանքանոցը բեր, պանիրը կշռենք:

— Ե՛, բան չունիս, հայրիկ, ինչ նեղություն տամ հարեանին, այ մեր սատկած իշի սմբակը, յես գիտեմ, վոր մի գրվանքա կը լինի:

— Սերոբ, Սերոբ, մի դուրս վազիր, տես յեղանակն ի՞նչպես ե:

— Ե՛, հայրիկ, ել ի՞նչ գնամ: Կուզես, կանչեմ շանը, յեթե Բողարի մազերը չոր են, յեղանակը հո պարզ ե:

— Սերոբ, Սերոբ, շունչը կտրած ասում ե հայրը, հացը բկիս կանգնեց, ջնւր... ջնւր հասցրու:

— Ե՛, հայրիկ, դու ել ինչ գժվար բան կա, ինձ ես դեմ անումս:

Սեվին ստպունն ինչ անի,

Խեվին խաւսն ինչ անի:

26. Հեքյաթասեր յերեխաներ

Չմեռ եր, գիշերը յերկար: Գյուլնազ տատը գլուխը բարձի վրա դրած՝ ննջում եր:

Յերեխաները վրա թափվեցին, քունը փախցրին, վոր իրանց համար մի հեքյաթ ասի. նա ել սկսեց.

— Յեղել ե, չի յեղել՝ մի արտուտիկ:

Կաուցը սուր՝ մեր Սուրիկի քթի նման:

Բըմբուլը խուճուճ՝ Արմիկի մազերի նման:

Թեերը փափլիկ՝ Արփիկի կռների նման:

Ահա այսպես սիրուն եր արտուտիկը:

— Բա ինձ նման վոչինչ չունէր, ասաց վանին.

— Բա ի՞նձ, ձայն տվավ Հոփիսիկը:

— Ինձ ել չասացիր, տատիկ, լաց յեղավ Նազիկը:

— Սպասեցեք, սպասեցեք, յերեխեք, դեռ չեմ վերջացրել. ամենքիդ ել բաժին կը հասնի, ասաց տատիկը և շարունակեց.

չլսեց ծերի խոսքին, փորձանք բերավ իրենց գլխին:

4.


Այդպես անցան սարեր ու ձոր, քարոտ ճամփեք վոլոր-մուրը, շատն ու քիչն ել հայտնի չե, վերջը հասան մի կամուրջի: Այստեղ ուղտը ձայնով կամաց ել ընկերին ցածից ասաց.

— Մի ինձ լսիր, գոռան ախպեր, վաղուց ե վոր յես չեմ պարել, հիմի վոր յես այս կամրջի վրա պարեմ՝ հո չի փրկի:

— Ծուռտիկ ախպեր, խելքի արի, ո՞վ ե լսել, ուղտը պարի: Փորձանք կը գա, մտքիցդ հան, թող վողջ հասնենք մեր ոթեան:

Բայց ուղտն իր բանը գիտեր, փոխադարձն անել կուզեր. վոտը դրավ այն կամրջին ու սկսավ իր վերվերին: Եղն ինչքան լեզու թափեց, ուղտը կարծես հեշ չլսեց. մին ել շրջմփ... մեր խեղճ եղին տեսան ձորի ջրի միջին:

Եղն ի՞նչ գիտե, նուշն ի՞նչ ե:



23. Զաղացպանի ննջարանը

Յերեք չորս հատ ջաղացաքար կարգով շարված պատվում են, իրանց ձահեզ գրգռուցով ամբողջ շենքը զրդրդացնում են, չախ-չախների չըխչըխկոցից մարդի ափանջ խլանում ե. իսկ ջաղացպանն այրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե: Բայց ջաղացը յեպանն այրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե: Բայց ջաղացը յեպանն այրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե: Բայց ջաղացը յեպանն այրաթաթախ խոր քնի մեջ խորմփում ե:

24. Փխոն

Փխոն, փխոն մլավան,
Թավրիզ թողեց, փախավ վան,
Լեզուն թաթխան, յերկար պոչ,
Ինչ վոր ուզեց, ասին՝ վոչ:

Փխոն գնաց գողեգող.
Փորը դատարկ, սիրտը դող...
Դուռնը մեկնեց կովկթին,
Շերեփն իջավ ճակատին:

25. Սերոբը

— Սերոբ, վորդիս, ասում ե հայրը, գնա արշինը բեր, կտավը չափենք:

— Ե՛, բան չունիս, հայրիկ, պատասխանում ե Սերոբը, ինչ նեղություն տամ հարեանին: Յես գիտեմ, վոր մեր կատուն պոչից սկսած մինչև ափանջի ծայրը մի արշին կը լինի: Ել արշինն ինչ կանենք:

— Սերոբ, Սերոբ, ասում ե հայրը, ապրես դու, մի գնա հարեանից զրվանքանոցը բեր, պանիրը կշռենք:

— Ե՛, բան չունիս, հայրիկ, ինչ նեղություն տամ հարեանին, այ մեր սատկած իշի սմբակը, յես գիտեմ, վոր մի զրվանքա կը լինի:

— Սերոբ, Սերոբ, մի դուրս վազիր, տես յեղանակն ի՞նչ պես ե:

— Ե՛, հայրիկ, ել ինչ գնամ: Կուզես, կանչեմ շանը, յեթե Բողարի մազերը չոր են, յեղանակը հո պարզ ե:

— Սերոբ, Սերոբ, չունչը կտրած ասում ե հայրը, հացը բկիս կանգնեց, ջուր... ջուր հասցրու:

— Ե՛, հայրիկ, դու ել ինչ դժվար բան կա, ինձ ես դեմ անումս:

Սեպին սասցունն ինչ անի,

Խեպին խրատն ինչ անի:

26. Հեքյաթասեր յերեխաներ

Չմեռ եր, գիշերը յերկար: Գյուլնազ տատը գլուխը բարձի վրա դրած՝ ննջում եր:

Յերեխաները վրա թափվեցին, քունը փախցրին, վոր իրանց համար մի հեքյաթ ասի, նա ել սկսեց.

— Յեղել ե, չի յեղել՝ մի արտուտիկ:

Կաուցը սուր՝ մեր Սուրբիկի քթի նման:

Բըմբուլը խուճուճ՝ Արմիկի մազերի նման:

Թեերը փափրիկ՝ Արփիկի կոնների նման:

Ահա այսպես սիրուն եր արտուտիկը:

— Բա ինձ նման վոչինչ չունի՞ր, ասաց Վանին:

— Բա ինձ, ձայն տվավ Հոփսիկը:

— Ինձ ել չասացիր, տատիկ, լաց յեղավ Նազիկը:

— Սպասեցեք, սպասեցեք, յերեխեք, գեռ չեմ վերջացրել. ամենքիդ ել բաժին կը հասնի, ասաց տատիկը և շարունակեց.

— Աչքերն այնպէս նախշուն եյրս, ինչպէս վանիկի աչքերը:
 — Կատարն այնպէս կարմիր եր, ինչպէս Հոփփօիկի թշերը:
 — Վոտներն այնպէս բարակ եյին, ինչպէս Նազիկի մատները:
 — Յետ վոտներ չեմ ուզում, գանգատվեց Նազիկը:
 — Բա ինչը կուզես, Նազիկ: Յեթե «տոտիկ» ասեմ, կուզե՞ս,
 ասում է տատիկը:

— Չեմ ուզում, վոչ վոտները կուզեմ, վոչ տոտիկները. յետ
 աչքերն եմ ուզում:

Այս բանի վրա յերեխաները սկսեցին վիճել, բայց տատիկը
 վոչինչ չեր լսում. նա գլուխը դրել եր բարձին ու քնել, ել չեյին
 կարող զարթնեցնել. իրանք ել վեր կացան ու մտան տեղները:

* *

Մյուս յերեկոյան յերեխաները հավաքվեցին տատիկի մոտ,
 վոր լսեն հեքյաթի շարունակութունը: Նա ել սկսեց.

— Անցյալ գարնանը մեր պարտեղի ծառի վրա մի սիրուն
 կկու կար: Յետ նստել եյի ծառի տակին, դուք ել մեկ մեկ յեկաք
 իմ մոտ:

Յերբ Սուրիկը ներս մտավ, կկուն կանչեց.

— ԿճԼ-կճԼ:

Յեկավ Արփիկը, կանչեց.

— ՊճԼ-պճԼ:

Յեկավ Արտիկը, կանչեց.

— ՏճԼ-տճԼ:

Յեկավ Հոփփօիկը, կանչեց.

— ԴճԼ-դճԼ:

Յեկավ Վանին, ասաց.

— ԲճԼ-բճԼ:

Յեկավ Նազիկը, կկուն ել
 վոչինչ չասաց, թռավ, գնաց:

— Ե՛ր, ո՛ր, Նազիկ, ո՛ր, ո՛ր, կկուն քեզ համար վոչինչ չի
 ասել... Միաբերան գոչեցին յերեխաները:

Նազիկը շատ նեղացավ, թե ինչու կկուն նրա համար վոչինչ
 չի ասել և սկսեց լաց լինել:

Տատիկն ասաց.

— Նազիկ, գիտե՞ս ինչու կկուն քեզ համար բան չասաց. նա
 վախեցավ քեզանից. ինչ վոր ասեր, դու չպիտի հավանեյիր:

— Տատիկ ջան, տատիկ, վոր մեկ ել կկուն գա, ասա՞ ինձ
 համար ել մի բան ասի. ինչ վոր ել ասի, յետ կընդունեմ, աղա-
 չեց Նազիկը:



27. Աշնան վերջը

Սարի լանջին,

մեզի միջում

խոխովում ե

ու տրտնջում

շուրը բարակ,

շուրը տխուր.

— Վաշ-վիշ, վաշ-վիշ,

ո՛ւր կորան, ո՛ւր

տերև ու խոտ,

վարդը շաղոտ,

սարվորն ուրախ,

սըրինգ ու խաղ:

Շուրջս դատարկ,

շուրջս տխուր...

վաշ-վիշ, վաշ-վիշ,

ո՛ւր կորան, ո՛ւր:

28. Ո՞վ է ուժեղ

Յետ եմ անտառի տերը, յետ եմ ամենից ուժեղը, ոլործեցավ
 չորդոտ արջն անտառների գազանների մոտ:

— Վոչ, մարդն ե, ճշաց աղվեսը:

— Ի՞նչպէս յետ համարձակվում այդպէս խոսել, աղվես. յետ
 մարդուն թաթիս մի հարվածով ջարդ ու փշուր կանեմ, ասաց արջը:

— Իսկ յետ նրան պատառ-պատառ կանեմ, վրա բերեց գայլը:

— Կը տեսնենք, փրնթիւնթաց աղվեսը:

Յետ կը թռչեմ բարձր, շատ բարձր, ամպերին կը հասնեմ, ասաց
 թռչունը. մարդը թևեր չունի, վոր ինձ հասնի:

— Յետ ել կը լողամ, ջրի խոր տեղը կիջնեմ, ասաց ձուկը.
 մարդը չի կարող ջրի մեջ ապրել, նա ինձ չի հասնի:

— Յետ հողի մեջ հանգիստ կը պառկեմ, ասաց վորդը. մարդն
 ինձ չի տեսնի և վոչինչ չի կարող անել:

Մարդը դուրս յեկավ հրացանն ուսին, մի ձեռքում թակարդ,
 մյուսում ուռկան: — Ի՞նչ արավ մարդը:

Այն ինչն է՝ Սեյ ու մոռ սոճ,
 Սասանուն մեջը քուն:

29. Զանաւեր մանուկը

Մի Զանաւեր ժածուկ լուսամուտի առաջ նստած, պատրաս-
 տում եր գառերը. փայլուն արևի շողքն բնկնելով գրքի վրա,
 դուրս եր հրավիրում մանուկին, ասելով.

— Յիրուն մանկիկ, բաժտկան չէ. քիչ կարգա, դուրս արի,
 քիչ ել խաղա:

Մանուկը նրան պատասխանում է.

պետք է դասերս վերջացնեմ: Մանուկը շարունակում է իր դործը: Մեկ էլ մի սիրուն թռչնակ թռթռալով գալիս է, իջնում պատուհանի վրա և ծվծվալով ասում.

— Սիրուն մանկիկ, բավական չե՞, ինչքան կարգացիր, դուրս արի, յերգիր, խաղա, զվարճացիր: Մանուկը պատասխանում է.

— Վոչ, սիրուն թռչնակ, փոչ. յես դեռ չեմ կարող խաղալ ու յերգել, քանի վոր դասերս դեռ չեմ պատրաստել:

Մանուկը շարունակ գրում է ու կարգում, բայց հիմա ել կարմիր կեռասն է երևում նրա աչքին և փսփսում ականջին, թե՛ բավական չե՞, ինչքան գրեցիր, արի, իմ ծառիս վրա բարձրացիր, հասած կեռասներս կեր ու կշտացիր: Իսկ մանուկը պատասխանում է. Շնորհակալ եմ, այժմ գործ ունեմ, ախորժակ չունեմ:

Վերջապես մանուկն իր գործն ավարտեց, փոչոքի խոտքից չխաբվեց, իր դասերը լավ պատրաստեց, հետո դեպի այգին փազեց և համարձակ ձայնով գոչեց.

— Այն ո՞վ եր, վոր ինձ հրավիրում եր. յեկեք, այժմ յես պատրաստ եմ ամենքիդ առաջարկությունը կատարելու:

Այնուհետև նրա յերեսին ժպտաց արեգակը, իր քաղցրիկ տաղերը յերգեց թռչնակը, կեռասն էլ դեմ արավ իր կարմիր թշիկ: Վոր տղայից առնե համբույր քնքուշիկ:

30. Արարի ձին

Կովի ժամանակ թշնամիները գերի վերցրին մի արարի: Նրա ձեռքերն ու փոքերը կապել էին, վոր չփախչի: Գերի եր ընկել նաև արարի ձին:

Գիշերը ամենքը քնած էին, բայց արարը արթուն եր: Նա մտածում եր իր կնոջ և յերեխաների մասին: Հանկարծ նա լսեց ձիու խրխնջոց: Նա ձանաչեց. դա իր ձիու ձայնն եր: Սողալով գնաց, մոտեցավ այն վրանին, վորի ցցին կապել էին ձին: Մոտեցավ և ասաց.

«Իմ ազնիվ ձի, դու ել ինձ պես գերի յես, տանջվում ես: Բայց յես ուզում եմ, վոր գոնե դու ազատ լինես: Վերադարձիր մեր վրանը, գլուխդ ներս յերկնցուր վրանից և լիզիր յերեստներին ձեռքերը»:

Այս ասելով՝ արարը ատամներով քանդեց իր ձիու փոռնակապերը: Ձին ազատվեց, բայց չուզեց մենակ փախչել: Նա գլուխը ծռեց, հոտոտեց տիրոջը և հասկանալով, վոր նա անկարող է հեծնել, իր ատամներով պինդ բռնեց նրա կաշե գոտուց և փախավ:

Ձին հասավ տիրոջ վրանը, վայր դրավ նրան կնոջ և յերեխաների առաջ, բայց սաստիկ հոգնածությունից անմիջապես սառեց:

31. Շողիկն ու Պեծիկը

1.

Զմռան տաք իրիկուն եր: Զյուն եր գալիս. ձյունի սպիտակ փաթիլներն ընկնում էին մութ գետնի վրա ու քնում:

Բոլոր փաթիլներն ամպերից իջան ու անուշ քնեցին տաք գետնի վրա, միայն յերկու կաթիլ ուշացել էին. նրանք ել ոգի մեջ խաղ անելով, գալիս էին ցած: Գույր ու յեղբայր էին. քըրոջ անունը Շողիկ եր, յեղբորը՝ Պեծիկ:

Ոգի մեջ պտտվելիս՝ մի պատուհան տեսան, վորից պայծառ լույս եր յերևում:

— Վայ, ինչ լավ լույս է, ասաց Շողիկն ու թռավ դեպի լույսը, գնաց թասեց պատուհանի յերկաթի վրա:

— Վայ, ինչ լավ լույս է, ասաց Պեծիկն ու ինքն ել մոտեցավ, վոր նստի յերկաթի վրա, բայց վտառը սահեց, ընկավ ցած մի թաց քարի վրա:

2.

— Շողիկ, ընկա, ասաց Պեծիկը:

— Դե վեր բարձրացի, ասաց Շողիկը վերելից: Պեծիկն տրավ թե վեր թռչի՝ չկարողացավ:

— Ձեմ կարող, ասաց, արի մոտս, Շողիկ:

Հիմա կը գամ, իսկույն. սպասիր տեսնեմ՝ ինչ են անում, պատասխանեց Շողիկն ու նայեց պատուհանից ներս: Ներսը մի սիրուն տոնածառ կար՝ կանաչ ճուղքերը փառած մոմերով ու խաղալիքներով զարդարված: Մոմերը վառվում, պեծին էին աալիս ու փայլուն բոցերն ուրախուբախ շարժում գետ ու դեն: Սենյակը վեր յերեխա եր: Ամենքն ուրախ պար բռնած ծառի չորս կոյմը պտտվում ու յերգում էին. յերգելիս ել, յերբ զվարթ աչքերը զցում էին ծառից կախած ձիերին, կանֆեաներին, արջերին ու փոսկեգոծ ընկույզներին՝ ավելի էին ուրախանում, ծափ տալիս, թռչկոտում: Շողիկի աչքերը շրացան, յերբ նայեց տոնածառին:

— Ինչ լավ տոնածառ է, մրմնջաց նա:

— Յես ել եմ ուզում տեսնել, ձայն տվեց Պեծիկը և ելի փորձեց վեր կենալ, չկարողացավ:

— Շողիկ, արի:

— Հիմա կը գամ, Պեծիկ ջան, հիմա:

— Դե, շուտ արի:

— Այ, հիմա, հիմա, ասում եր Շողիկն ու նայում ներս: Պեծիկը թաց, մութ քարի վրա դողում եր ու սպասում քրոջը: Բայց Շողիկն այնքան տարվել եր տոնածառով, վոր ել մո-

եր նա:

Այդ միջոցին յերեխաները յերգեցին նոր տարվա յերգը: Շողիկն ել ուզեց նրանց հետ յերգել, չկարողացավ. միայն պայծառ շողշողաց ու ծիծաղեց:

— Շողիկ, գե արի, ձայն տվեց Պեծիկը լացակումած:

— Բայց Շողիկն ել չէր լսում:

3.

Շուտով յերեխաներին միրգ բաժանեցին և վերջն ել վիճակ գցեցին. տոնածառի ձիերը, արջերը, նապաստակը, կանֆետներն ու վոսկեզոծ ընկույղները տվին յերեխաներին:

— Ուխան, ուխան, դու չու՞մ եյին յերեխաները և ուրախ-ուրախ ծափ տալիս:



Շուտով տոնածառը վերջացավ և յերեխաները խաղալիքների հետ ցրվեցին իրենց տները: Հանկարծ Շողիկը հիշեց Պեծիկին....

— Պեծիկ, ձայն տվեց անհանդիստ:

Յաճ նայեց Շողիկը, տեսավ, վոր Պեծիկը թաց քարի վրա այնքան լացել, լացել էր, վոր հալվել, կորել էր:

«Վայ» արավ Շողիկը, ծնկին տվեց ու տխրեց՝ մնաց. պատուհանի յերկաթին մենակ նստած տխրեց, տխրեց, վերջն ել աչքերից արցունք վազեց ու նա ել հալվեց, ընկավ թաց քարի վրա, կորավ...

32. Յերկու խով

Միևնույն յերկաթի կտորից և միևնույն արհեստանոցում շինված եյին յերկու խով: Նրանցից մեկը գնեց մի յերկրագործ և տկեսեց գործ ածել նրան, իսկ մյուսը յերկար ժամանակ բոլորովին անողուտ ընկած էր վաճառականի խանութում: Պատահեց, վոր մի քանի ժամանակից հետո յերկու ընկերները դարձյալ տեսան իրար: Յերկրագործի մոտ յեղած խովին արծաթի պես պսպղում էր և առաջվանից ավելի գեղեցկացել էր, իսկ մյուսը սևացել էր ու ժանգոտել:

— Ասա, խնդրեմ, հարցրեց ժանգոտած խովը իր ընկերին, այդ ի՞նչիցն է, վոր դու այդպես փայլում ես, իսկ յես այսպես սևացել եմ ու ժանգոտել:

— Աշխատելուց, սիրելիս, պատասխանեց մյուսը, իսկ դու փոր ժանգոտել և առաջվանից ավելի վատացել ես, այդ ել նրանից է, վոր այսքան ժամանակ կողքիդ ընկած՝ փոշինչ չես արել:

33. Սուտասանը

1.

Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Այս թագավորը իր յերկրում հայտնում է.

«Ով այնպես սուտ ասի, վոր յես ասեմ՝ սուտ է, իմ թագավորութան կեսը կ'ի տամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

— Թագավորն ապրած կենա, իմ հայրը մի դադանակ ուներ, վոր այստեղից մեկնում էր, յերկնքում աստղերը խառնում:

— Կը պատահի, պատասխանեց թագավորը: Իմ պապն ել մի չիբուխ ուներ, մի ծայրը բերանին էր դնում, մյուս ծայրը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախուսը գլուխը քորելով դուրս է գնում:

Գալիս ե մի դերձակ: Ստում ե.

— Ներողութուն, թագավոր, յես վաղ պիտի գայի, ուշացա: Յերեկ շատ անձրև յեկավ, կայծակները տրաքեցին, յերկինքը պատվեց՝ գնացել էյի կարկատելու:

— Հա, լավ ես արել, ասում ե թագավորը, բայց լավ չեյիր կարկատել. այս առավոտ ել մի քիչ անձրև թափվեց:

Սա ել դուրս ե գնում:

3.

Ներս ե մտնում մի աղքատ գյուղացի:

— Դձև ինչ ես ուզում, ա՛յ մարդ, հարցնում ե թագավորը:

— Ինձ մի փութ փոսկի յես պարտ, յեկել եմ տանեմ:

— Մի փութ փոսկի, դարմանում ե թագավորը: Սուտ ես ասում, յես քեզ փոսկի չեմ պարտ:

— Թե փոր սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

— Չե, չե, ճշմարիտ ես ասում, խոսքը փոխում ե թագավորը:

— Թե փոր ճշմարիտ եմ ասում, մի փութ փոսկին տուր:

34. Չորս յեղանակ

1.

Որը տաքացավ, ձյունը հալվեց արևից,
Քրչքրչալով ջուր ե հոսում զոներից,
Սար ու ձորեր դարդարվեցին կանաչով,
Դաշտը ծածկվեց վոշխտրների հոտերով:

Հա, հա, հա, գարուն ե.

Տեսեք, ինչպես սիրուն ե...

2.

Սաստիկ շոգ ե. ցորեն, դարի հասել են,
Հնձողները խոտը քաղել, գիգել են,
Բոլոր ծառերը ծածկվել են տերևով,
Պտուղները «ճեկ» են անում ժպտալով:

Հո-հո-հո, ամառ ե.

Արևը խիտ կը վառե...

3.

Շոգերն անցան. պտուղները քաղեցին,
Հացով, մրգով ամբարները լցրեցին,
Յերկինքն ամպեց, բարակ անձրև ե մազում,
Մերկ դաշտերը և ծառերը վողոգում:

Եյ-եյ-եյ, աշուն ե.

Տեսեք, ինչպես նախշուն ե...

Որը կարճ ե, արև չկա, շատ ցուրտ ե,

ձերմակ ձյունը քուլա-քուլա կը թափե.

Մարդ, անասուն, բուք-բորանից վախեցած,

Տաք-տաք տներ, խոր-խոր բներ են մաած:

Ո՛յ, ո՛յ, ո՛յ, ձմեռ ե.

Անտանելի մի բեռն ե...

35. Քեռի Սիմոնի նապաստակը

1.

Քեռի Սիմոնը շատ լավ մարդ ե. ափսոս, վոր մի քիչ գինեռն բարեկամ ե:

Մի որ աղան ուղարկում ե նրան քաղաք, ձեռքը տալիս ե մի նապաստակ, վոր տանի իր ընկերոջը նվեր:

Քեռի Սիմոնը լուրդականջ կարճպոչանուն ձգում ե մի պարկի մեջ, պարկը շալակում ու ճամփա ե ընկնում: Վճնց ե գնում... Իսկ նապաստակը պարկում կուչ ե յեկել, կծիկ կտրել:

Ճամփի կեսին մի գինետուն կար: Քեռի Սիմոնը ուզում եր առանց նայելու մոտովն անց կենա, մի տասը քայլ ել արդեն անց եր կացել, բայց չհամբերեց, յետ նայեց: Խանութի շեմքում ծառայողներ տեսավ:

Մտածեց. «Բա, մեկ բարի լույս ել ե չասեմ»...

Քեռի Սիմոնը մտավ գինետուն: Պարկը դուրսը վայր դրավ ու ծանոթների կենացն ե խմում: Չգիտի, թե այդ ծանոթները զրկին ինչ են բերում:

2.

Խմեց, պարկը շալակը գցեց ու բայաթին կրկրլացնելով՝ առաջ ե գնում:

Միայն թե այս նապաստակը ինչ-վոր շատ ե վեր-վեր թռչում պարկի մեջ: Ի՜նչ ել սուր առամներ ե ունեցել: Քեռի Սիմոնի մեջքը կարծես ասեղներով ծակծրկում եյին:

— Այ, հանգիստ կաց, չլիկ խնամի: Շոքել ես, հա: Ես ե կք հասնենք, մուշտակդ կը հանեն, զե գնա ու տկոոր-տկոոր արտինգ տուր:

Քեռի Սիմոնի քեֆը տեղն եր:

Յեվ ել ահա աղայի ընկերոջ տունը:

Թրը՛խկ, թրը՛խկ: Բաց արեք, բաց արեք: Մեկ նապաստակ եմ բերել, մեկ նապաստակ վոր... դե, շտապեցեք, շոքել ե:

առողջ-փառողջ պարկից հանում ե... կատու: Քեռի Սիմոնը շրջկա՝
կանգնել է կատվի պոչից բարձր բռնած:

— Այդ նապաստակը քեզ լինի, քեզ, կանչում ե տան
աիկինը:

Աղայի ընկերը բարկանում է, յերեխաները ծիծաղում են, շնե-
րը հաչում են:

Քեռի Սիմոնը վերջապես կատուն գցում է նորից պարկը, շա-
ղակում և հայտն է յետ դեպի գյուղը:

3.

Ճամփին ինքն իրան ասում է. «Քեռի Սիմոն, տեսա՞ր հա, հո
տեսար: Ախր նապաստակ բռնողը դու չեյիր, տոպրակի մեջ գցողը
դու չեյիր, խելքի տոպրակ: Չլինի՞ թե աղեն մի բան է արել,
վոր ինձ խայտառակի»:

Հասնում է նորից գինետունը:

Մանի, թե՛ չմանի: Չե, ինչպես կարելի է. պետք է շու-
տով տուն հասնի: Այս բան է, վոր իր տարիքի մարդուն այսպես
խայտառակեցին ժողովրդի միջին: Չե, չի մտնի:

Ու մի բան քայլ անց է կենում գենը:

— Բա այս այրված սիրտն ել է չհովացնեմ, մտածում է
մեկ ել, պարկը մեկ ուսից մյուսն է գցում ու շուռ գալիս դեպի
գինետուն:

Նորից մի յերկու բաժակ կոնծում է ծանոթների կենացը:
Նրանք ել հո անում են իրանց անելիքը:

4.

Պարկը շաղակին ահա մտնում է մեր քեռին գյուղը:

«Վոնց է սուս կացել, սրան տես: Հիմա թուշկոտիւր պարկի
մեջ, ե... գիտես՝ վոր ես ե, զրխկ եմ անելու քեզ, հա... Մեկ ա-
ղին տեսնեմ դեռ: Այսպես ել խայտառակություն: Քեռի Սիմոնը
սի, կատուն սի: Տո, այն՝ աշխարհի պարծանք վորսկանը սի,
մկան գողը սի»:

Թրըխկ, հա թրըխկ, վոնց է ծեծում Քեռի Սիմոնը աղայի
դուռը:

— Բաց արեք ելի, բաց արեք: Ալեորիս խայտառակեցիք: Չեզ
մի կատու ցույց տամ, մի կատու վո՞ր...

Տանեցիք դուրս են թափվում:

— Ահա, աղա, ընկերդ քեզ յետ է զրկում: Ասում է. «Ես
դու, ես ել քո նապաստակը»:

Մեկ ել զորթ՝ նապաստակը չի հանի պարկից:

Քեռի Սիմոնը շրջկա՝ կանգնել է նապաստակի յերկար ա-
կանջներից բարձր բռնած: Աղան աչքերը չռած նայում է, թե
նապաստակը ինչո՞ւ յե յետ բերել:

— Թու, սատանի ճուտ, հանկարծ աղաղակում է Քեռի Սի-
մոնը: Նապաստակը ձեռքից վայր է ընկնում ու փախչում: Աղան
կանգնած հարա յե տալիս, շնեքը վազում են:

5.

Են է ու են՝ Քեռի Սիմոնը նապաստակ չի վորսում:

Են է ու են՝ աղան և իր ընկերը իրար հետ վիճում են:

— Գու ինձ ինչո՞ւ եյիր կատու ուղարկում, յես քո ծաղրի ա-
ռարկան եմ:

— Աստված, յերկինք, նապաստակ եր, նապաստակ:

— Այ ալեոր, քո բռնածը, քաղաք տարածը նապաստակ չե՞ր:

— Նապաստակ եր, աղա ջան, դու շատ ապրես, նապաս-
տակ եր:

— Այ մարդ, քո բերածը կատու չե՞ր, սե կատու, հարցնում
եր աղայի բարեկամը:

— Կատու եր, աղա ջան, բաս կատու չե՞ր:

Այսպես մինչև այսոր ել վիճում են:

36. Ուրազ ու սղոց

Մի լինի ուրազի պես,

միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ:

Այլ յեղիւր սղոցի պես,

մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

37. Ձաղաց

Ձուրը նավից արշավելով՝

կատաղաբար ձայն է հանում,

Ու ջաղացի հատակի տակ

կարծես ամպեր են գոգոտում:

Գանձ-գանձ-գանձ...

Գանձ-գանձ-գանձ...

Անիմների խիստ շարժվելուց

Ամբողջ հոտակն է գողգողում,

Ու յերկանի պարտվելուց

Փոքրիկ լեզվակն ե չրխչրխում.

Չախկ-չոխկ-չոխկ...

Չախկ-չոխկ-չոխկ...

Նա շարժվում ե որորվելով,

Լիքն ամբարի դունչը շարժում.

Վորից վերին յերկանի մեջ

Մաքուր ցորեն ե ներս թափվում.

Թափ-թոփ-թոփ...

Թափ-թոփ-թոփ...

Իսկ քարի տակ մանրվելով,


Այլուր դարձած տաշտն ե ածվում,

Ու շաղաքը սպիտակ փոշին

Վերմակի պես վրան փրոում.

Փառ-փոռ-փոռ...

Փառ-փոռ-փոռ...



38. Ջութակահարը

1.

Ջութակահար Կիրակոսը կոնծել, զլուխը տաքացրել եր. նա գնում եր անտառով, մեկ ել հանկարծ թըրը՝ մը՝ փոսն ընկավ:

— Ո՛յ, ո՛յ, ո՛յ, կողքս կտորվեց, ինքն իրան ասաց Կիրակոսը. այ դու անպիտան վորսորդ, այս ի՞նչ ես շինել:

— Այն ո՞վ ե, փափսաց Կիրակոսը. այն ո՞վ ե, տեր Աստված:

Նա տեսավ յերկու փայլուն աչքեր ե սարսափեց. գայլ ե, գայլ. հիմա վորտեղ վոր ե, ինձ կտոր-կտոր կանի, մտածում եր Կիրակոսը ե փախից թուրը չորացել եր:


Կիրակոսը վեր առավ ջութակը ե ածեց:

Գայլը նայում ե հանգիստ լսում եր:

Կիրակոսը քանի գնում, ավելի ու ավելի սրտանց եր ածում. գայլը լսում ե վրոնում եր: Մեկ ել Կիրակոսը վերե նայեց ե ի՞նչ տեսավ. մի քանի գայլեր փոսի չորս կողմը նստած լսում են:

— Յես կորա, յես կորա, մտածում եր Կիրակոսը: Հանկարծ ջութակի յերկու թելը կտրվեց: Կիրակոսն ածում, հա ածում եր. մի թելն ել կտրվեց:

— Ա՛խ, գոնե այս մի թելը մնար, մտածում եր Կիրակոսը ե նորից ածում: Ջութակի ձայնը վորսորդները լսեցին, մոտեցան փոսին ե Կիրակոսին ազատեցին:



39. Ճպուռն ու մրջուներ

Թրոփ-վրոփ մի ճպուռ

Վողջ ամառը շուռ ու մուռ

Յերգեց, ճաաց,

Ճրոճոաց:

Մին ել ընդ. ձմեռը

Փռեց իրա թեկերը,

Բացեց գորգը սպիտակ,

Դաշտերն առավ ձյունի տակ:

Յեկան որեր ցրտաշունչ,

Ճպուռն ընկավ լուռ ու մունջ.

Քաղցած փորին ել ի՞նչ յերգ,

Ցուրտը տարավ փոս ու ձեռք:

Զընգըր-զընգըր զողալով,

Ծանր ծանր սողալով,

Նա մրջուներն ասում եր.

«Գլխիդ մատաղ, սանամեր,

Մի ճար արա, շունչ առնեմ,

Յրախոյ, սովորեց չմեռնեմ:
 Կերակրի, տաքացուր,
 Մինչև զարուն ապրեցուր»:
 — Ի՞նչ խաբար ե, իմ սանիկ,
 Զարմանում եմ, ա շանիկ:
 Զաշխատեցիր ամառը,
 Ասա, ի՞նչ եր պատճառը:
 «Եղպես բանի, սանամեր,
 Ել ով ժամանակ ուներ:
 Են խոտերում բուրավեա
 Յերգում եյի մերոնց հետ»:
 — Յերգում եյիր, շատ բարի,
 Այժմ ել բռնի վեր-վերի,
 Քամին ծափ տա՝ դու պարի:

40. Խանութում

Խորենը թաշկինակով ամուր կապել է Լուսիկի աչքերը և կույրի պես փողոցում ման է ածում: Ներս են մտնում մի խանութ:
 — Կույր, ա կույր, յես քեզ բերի հասցրի...
 — Ո՞ւր բերիր:
 — Իմացիր ինքդ: Տեսնել ի հարկե չես կարող, աչքերդ լավ կապել եմ, բայց հոտ առնել հո կարող ես:
 — Յես պանրի հոտ եմ առնում:
 — Ել վոչինչ:
 — Յես նավթի հոտ եմ առնում:
 — Ել վոչինչ:
 — Յես սապնի հոտ ել եմ առնում:
 — Ել վոչինչ:
 — Սպասիր... կարծեմ, յես դարչինի հոտ ել եմ առնում:
 — Ել վոչինչ:
 — Հա, ելի զանազան բաների հոտ եմ առնում: Յերեկ կիտրոն ե:
 — Ապա ավելի ուժ տուր քթիդ: Հը, հը, ամենքը վրադ ծիծաղում են, փոր կույրի պես այստեղ կանգնած ես և չես կարողանում իմանալ, թե փորտեղ ես:
 — Ա՛խր յես վաղուց գիտեմ:
 — Ճիշտ: Դե, ասա, վճրտեղ ես:
 — Մանրունքի խանութում:
 — Ճիշտ ե, իմացար: Թաշկինակն ահա աչքերիցդ հեռացնեմ, տես: Խորենը Լուսիկի աչքերից թաշկինակը հեռացրեց, յերկուսով ել սկսեցին ծիծաղել:

 Խանութպանն ել եր յերեխաների հետ ծիծաղում:
 — Բարով, Լուսիկ, բարով, Խորեն, ի՞նչ կը հրամայեր:
 — Վոչինչ, յես ուզում եյի իմանալ, թե մեր Լուսիկը հոտ առնելով կարող ե իմանալ, թե իր շուրջը ինչեր կան և ուր ե գտնվում:
 — Աս, բա վոչինչ չե՞ք ուզում:
 — Չե:
 — Հիմա մի ուրիշ բան փորձենք, ասում ե վաճառականը:
 — Ապա, Լուսիկ, աչքերդ խփիր, բերանդ բաց:
 Բան դրին իր բերանը, ալյուրի պես մի բան եր, բայց քաղցր:
 — Դեհ, Լուսիկ, ի՞նչ եր, իմացիր:
 — Շաքարի փոշի:
 — Ապա դու, Խորեն, աչքերդ փակիր և բերանդ բաց:
 Խորենը զգում ե, փոր բերանը չոր, տաշեղի պես մի բան գցեցին: Իսկույն աչքերը բաց ե անում:
 — Ա՛խ, մի նուշ գցեցիր բերանս:
 Լուսիկը ծիծաղում ե:
 — Օյս չեղավ, քեռի, այս չեղավ: Խորենը աչքերը բաց ա-
 րավ ու ասեցավ: Նորից կրկնիր:
 Ծիծաղում են փոքրիկները, ծիծաղում ե խանութպանը, ծի-
 ծաղում են խանութում յեղողները:

Սպիտակ խառ եմ ասումը,
 Հիսուս քաղցած սուփումը:
 Իմ անունը յի գտնի,
 Ով համ յոռնի քերեումը:

41. Ծիծեռնակների չուն

1.

Աշունը մոտենում եր:
 Ծիծեռնակները ամեն իրիկուն հավաքվում եյին, շարվում մի կտուրի ծայրին կամ հեռագրի թելերի վրա ու անհանդիստ ծըլ-
 վրում:
 — Ինչպես գեղնել ե խոտը, ասում եր մեկը: Ամբողջ որը
 լաղիվ մի քանի թիթեռ ճարեցի:
 — Տերևները թափվում են, յեղեգները չորանում, մոզուկ-
 ւերն ել չեն յերևում: Մնացել են միայն հատ-հատ ճանճեր, ա-
 ում ե մյուսը:
 — Յեվ որը ինչքան ե կարճացել, մեջ մտավ յերրորդը:

Դեռ կշտացած չես լինում, մեկ էլ տեսար՝ մթնեց: Գիշերներն էլ տխրես ցուրտ ե:

Այսպես հավաքվում էին ու դանդաղում ծիծեռնակները:

2.

Մի իրիկուն էլ բոլոր ծիծեռնակները ժողովեցին բարձր գանդակատան գլխին: Այնքան շատ էին, վոր գանդակատունը սեին եր տալիս:

— Չե՛, չե՛, ասում էին ջահելները, էլ գիմանալու բան չե՛: Քիչ էլ վոր մնանք, սովից կը կոտորվինք:

— Ժամանակ է, վոր չվենք, հայտնեցին ծերերը:

Այդ գիշերը ծիծեռնակները բոլորը միասին անցկացրին յեկեղեցու գմբեթին: Իսկ առավոտը վաղ, լուսաբացին, ամբողջ յերամբ վեր կացավ ու ճովողելով սկսեց պտույտներ անել տների գլխին:

— Մնաք բարով, մեր սիրունիկ բունիկներ, կանչում էին ծերերը:

— Մնաք բարով, մեր փափուկ որորաններ, կանչում էին ջահելները:

Ու բոլորը միասին սլացան դեպի վեր, բարձր, բարձր ու ձգվեցին դեպի հարավ, դեպի տաք յերկիրները:

Բարի ճանապարհ, բարի ծիծեռնակներ:

42. Անտառ

Անտառի պես պճնասեր,
էլ ուրիշը կըլինի՛:

Ունի սիրուն հագուստներ

Ու զարդարանք գեղանի:

Մեկ էլ տեսար՝ նա կանաչ

Շորեր հագած զարդարուն,

Նազ ու տուգով ձախ ու աջ

Տատանվում է, սլալում:

Մեկ էլ դեզին շոր մտած,

Տեղ-տեղ՝ կարմիր ու նախշուն,

Ազա տկլոր, գլխաբաց

Որորվում է, հառաչում:

Նորահարսի պես սալտալ

Մեկ էլ տեսար՝ հագավ շոր,

Կախած փայլուն զինդ, մանյակ,

Կանգնեց անշարժ ու մոլոր...

Ու վողջ տալին պճնասեր,

Սիրուն անտառ հա այսպես

Փոփոխում է իր շորեր

Յեվ զարդարանքը պեսպես:

43. Շունն ու կատուն

1.

Ժամանակով կատուն

ճոն եր,

Շունն էլ գլխին գդակ

չուներ,

միայն գիտեմ ո՛չ՝ վորդիանց

վորդի

ճանկել եր մի գառան

մորթի:

Յեկավ մի որ, ճմեռնա-

մըտին,

կապի կուշտը տարավ

մորթին:

— Բարի աշողում, ուստա

Փիտ,



գլուխս մըսեց, ի սեր Ասածո,

առ ես մորթին ու ինձ համար

մի գդակ կարի գլխիս հարմար:

Վարձիդ համար միամիտ մնա,

համա-համա շատ չուշանա:

— Աչքիս վրա, քեռի Քուշի,

մի գդակ է, հո մի քուրք չի:

Քո թանկագին խաթեր համար

ուրբաթ որը համեցեք տար:

Փողի մասին ավելորդ է,

մեր մեջ խոսելն էլ ամոթ է.

ինչ մեծ բան է, տո՛, հեր որհնած,

միայն-միայն մի գդակի վարձ:

Ուրբաթ որը քեռի Քուշին՝

ուստից առաջ՝ բաց-բաց կուճին

թափ-թափ տալով ծանր ու մեծ,

ուստա կապի շեմքում կանգնեց:

— Ուստեն ուր ա, փափախս ուր ա...

«Մի քիչ կացի՛, հրես կերես»:

2.

Ուստեն յեկավ քուրքը հագին,

Շանը տեսավ, բեխի տուկին

իրեն-իրեն քիչ փրնթփրնթաց
ու մուշտարու վրա թնդաց.


— Յուրոր տարա՞վ... վա՛ն տընաշեն,
չես թող անում, մի շունչ քաշեն.
հեշտ բան հո չի, գեռ յես նոր եմ
ցրրցամ տըվել, թե վոր կարեմ:

— Դե, հեր որհնած, ետենց ասա,
եդ բարկանալդ ել ինչիս ա:
Փող եմ տըվել, վախտին կարի,
թե չե ասա՝ եդուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
համ խոսում ես, վրբես գոռում,
համ, համ, համ, համ,
քանի, ախպեր, գընամ ու գամ...

Ասավ Գուշին ու նեղացած
վերադարձավ գլուխը բաց:

3.

Մին ել յեկավ, դարձյալ չկար.
ես անգամը դիպան իրար.
ել անպատիվ, անարգ խոսքեր,
ել հին ու նոր, ել հեր ու մեր,
ել գող Փիսճ, ել քաշալ Շոճն...



բանը հասավ դիվան բաշուն:
Շունը մինչև գնաց յեկավ,
ուստա կատուն կտորըն ընկավ,
գլուխն առավ ու մի գիշեր,
հայդե, կորավ, են կորչին եր...



4.

Են որվանից մինչև որս ել
Շունն ես բանը չի մոռացել.
մըտքում հըլա դեռ պահում ե,
վորտեղ կատվին պատահում ե,
վեր ե թըռչում, վրրա վազում,
իրեն մորթին յետ ե ուզում.
Իսկ սեերես կատուն հանկարծ
փըշտացնում ե. մըթամ նոր եմ
ցրրցամ տըվել, թե վոր կարեմ:

44. Գարնան կարոտ

Կարոտ ենք տեսքիդ, անման դարուն,
Շուտ արի մեզ մոտ, բեր մեզ տաք որեր,
Բեր պայծառ արև, բեր ծաղիկ սիրուն,
Ճըռվըռող թռչուն, բեր կանաչ դաշտեր:
Թող բացվեն, ծաղկեն վարդ, մեխակ,
շուշան.
Բաց մեր գուները, բաց մեր պատու-
հան.
Փակված սենյակից յեխենք, աղատ-
վենք,
կանաչ դաշտ յերթանք, խաղանք,
գլորվենք:

45. Արհեստ ընտրող մանուկը

1.

Թորոսի վորդին մի ծույլ աղա յեր, վոչ գիր եր սովորում ե
վոչ մի արհեստ:

— Ի՞նչ արհեստ սովորեմ, փնթփնթում եր նա. կլեկչությու-
նը շատ լավ արհեստ ե, բայց բորիկ վտարով ամանում կանգնել,
փրան պտտել, դա ախքան հեշտ չե: Ավելի հեշտ ե փուքսի փչելը,
բայց այդ իմ ձեռքում չերկար չեն թողնի: Վարպետ ել դառնամ,
ի՞նչ եմ անելու. պետք ե մատերով փոքը ինչ բամբակով տաք-
տաք պղնձին նաշաղիբ քսեմ, ձեռքերս այրեմ: Չե, այդ իմ
բանը չե:

Դարձնի մոտ կերթամ, այնտեղ ել փուլքս կա, ձմեռն ել տաք
ե, բայց մեծ ուժ ե պետք այդ գործի համար, ահագին մուրճով
յերկաթը ծեծել, վոր նա տափակի: Յես այդ չեմ անիլ, ինչ կու-
զի լինի:

3.

Չայտառը լավ ե: Մեխի ծայրը սրել և պայտեր շինել, այդ
շատ դժվար չե, բայց մեկ ամենի ձիու վտար բռնել, ծնկանը դնել,
— յերկյուղալի ե, ձիու աքացին իմ ընկերներին ապտակից թռնոց
ե: Չե, իմ կարծիքով դա լավ արհեստ չե:

4.

Դերձակութունը մաքուր արհեստ ե, լավ միտս ընկավ: Բայց
ինչ եմ ասում. ամբողջ ողորով ծալապատիկ նստել, գլուխ քաշ
զցած կարել ու կարել, վոչ խաղալ կը լինի, վոչ վաղվրդել: Չե,
դա ել բան չե:

5.

Ինչո՞ւ չգնամ, վորմնադիր դառնամ, բարձր պատերի ծայրին
կանգնեմ, այնտեղից կանչեմ.

— Քար ու կիր տվեք, աղյուս ձգեցեք: Այսպես կը գոռամ
ու կը հրամայեմ, վոր աշխարհը տեսնի, թե յես վարպետ եմ,
գործս լավ գիտեմ: Բայց վայ թե հանկարծ այդ բարձր տեղից
վտարս սկսվի և թըրմփալով ներքև գլորվեմ: Չե, այդ հեշտ գործ
չե և վոչ ել իմ բանն ե:


6.

Յերեվի չկա այնպիսի արհեստ, վոր յես հավանեմ, գնամ սո-
վորեմ: Թե հյուան դառնամ, վտարս կը կտրեմ. կռկակար դառ-
նամ, ձեռքս կը ծակեմ. վոսկերիչ դառնամ, մատերս կայրեմ. թե
բրուտ դառնամ, ցեխ պիտի կոխ տամ. ուսումնարան գնամ, գիր
պիտի սովորեմ: Չե, իմ կարծիքով ամենից լավ ե վոչինչ չշինեմ,
վոչինչ չսովորեմ:

Բայց այնուհետև ինչ կը դառնամ...

Յես աղա, դու աղա,
Մեր աղունն ո՞վ աղա:

46. Աղվեսը բաժանարար



Յերկու ագռավ մի կտոր պանիր
եյին գտել: Ուզում եյին իրենց մեջ
բաժանեն: Մինն ասում եր—յես բա-
ժանեմ, մյուսը թե՛ չե, յես: Ու կըռ-
վում եյին ծառի վրա: Վոչ մինը չեր
համաձայնում, վոր ընկերը բաժանի:

Մի աղվես տեսավ, յեկավ ծառի տակ կանգնեց.

— Ինչո՞ւ յեք կռվում, ասաց, պանիրը ներքև զցե-
ցեք, այնպես բաժանեմ, վոր վոչ մեկիդ բաժինը ավել
պակաս չլինի:

Վեճը դադարեց. ագռավները սրանից զցեցին ծառի
տակը:

Աղվեսը յերկու կտոր արավ, բռնեց յերկու թաթերի
մեջ, ծանր ու թեթև արավ, վոր վոչ մեկը ավել պակաս
չլինի:

— Ես մինը ծանր ե, ասաց ու
կծեց: Դարձյալ թաթերով կշռեց, հիմի
ել մեկից կծեց: Կծելով, կծելով
բոլորը կերավ ու սուս ու փուս գնաց
իր բանին:

Ագռավները մնացին յեանից նա-
յելով:

47. Կանանչ ախպեր

Ե՛յ, կանանչ ախպեր,
Ե՛յ, ճանանչ ախպեր,
Արի, քեզ հետ բեր
Արևի շողեր:

Բեր անուշահոտ
Միլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վրտակ
Յերկինք կապուտակ:

Խառուածիկ հավքեր,
Զրնգան յերգեր
Գառների մայուն,

Խաղ, ուրախութուն.
Ե՛յ, կանանչ ախպեր,
Ե՛յ, ճանանչ ախպեր:

Կոտ ու կես կորեկ ունենա ցանելու համար,
 ճննդուկներ թռան յեկան ուտելու համար,
 կռացա, քար վեր առա զարկելու համար:
 Ղասաքներ զանազ բերին մորթելու համար,
 պառաժներ պղինձ զրին յեփելու համար,
 դուռ-զրկից շուրջ բազմեցին ուտելու համար,
 տերտերներ խաշով յեկան որհնելու համար,
 աշուղներ սազով յեկան գովելու համար:

Ա՛յ, ճննդկիկ,
 կարմիր տոտիկ,
 սպիտակ փորիկ,
 ուտեն կուտիկ,
 խմեն ջրիկ,
 առի յեղրիկ,
 պտիկ-մստիկ,
 փախչեն, յերթան ման գալու համար:

49. Փոքրիկ մշակը



Խորենի հայրիկը մշակութուն
 էր անում քաղաքում: Մի իրի-
 կուն շատ հոգնած վերադարձավ
 տուն: Մեջքը ցավում էր, փու-
 ներում ել ուժ չէր մնացել: Հայ-
 րիկը անկողին մտավ ու մի քա-
 նի որ վեր չկացավ:

Ո՛վ պիտի գնար աշխատան-
 քի, փոր ընտանիքը պահեր, փոր
 կերակրեր վեց հոգուն:

Մայրիկը վերջին քսանկուպե-
 կանոցը այսօր տվավ հացի: Իսկ
 վանդը:

Խորենը մտածում էր ամ-
 բողջ գիշերը:

Առավոտը վաղ, յերբ ամենքը
 քնած էին դեռ, և հայրիկը, և
 մայրիկը, և փոքրիկ քույրերն ու
 յեղբայրները, Խորենը հագավ իր մաշված փոստամանները, գլխին
 դրավ փափախը, ուտը զցեց հոր փախանը ու գնաց կանգնեց քա-
 ղաքի հրապարակում, փորտեղ կանգնում են մշակները:

Աշխատողը անորի յի մնաց:

Ահա ծագեց կարմիր արև,
 Տաք ու պայծառ է որը,
 Դեհ, քաշեցեք, սիրուն յեղներ,
 Առաջ տարեք արորը:

Վարը վարենք, ահոս փորենք,
 Խոր ախտներ հողի մեջ,
 Սերմը ցանենք, վոր հունձ հնձենք,
 Խուրձեր դիզենք կալի մեջ:

Կը դա ձմեռ, մենք վախ չունենք,
 Ուրախ կանցնի մեր որը,
 Ուտելու միշտ պաշար ունենք,
 Յերբ լիք լինի մեր հորը:

Դեհ, քաշեցեք, սիրուն յեղներ,
 Տաք ու պայծառ է որը,
 Ահա ծագեց կարմիր արև,
 Առաջ տարեք արորը:

51. Փոքրիկ խանութպանը

— Տատիկ ջան, արի խաղանք, խնդրում ե փոքրիկ Յեր-
 վանդը:

— Լավ, խաղանք, համաձայնեց տատիկը:

— Խանութ խաղանք, հա տատիկ:

— Լավ, խանութ խաղանք:

Ու Յերվանդը վազեց, քաշ տվավ մի յերկու աթոռ, շաբեց
 իրար կողքի:

— Ես սեղանը:

Վրան դարսեց տուփեր, զրքեր, լրագրեր, քրոջ տիկնիկը, իր
 հողը, ուրիշ խաղալիքներ, ելի տուփեր, ելի զրքեր, մի յերկու հատ
 ել շիշ, իր խնձորը, վոր դեռ չէր կերել, հետո իր փոքրիկ գրչա-
 հատը:

Խանութը պատրաստ է:

Վազեց, կողքի սենյակից բերավ տատիկի մեծ գունավոր թաշ-
 կինակը, կապեց առաջը գոգնոցի պես, մի մեծ մատիտ անցկացրեց
 ախանջի յետևն ու կանգնեց խանութի առաջ:

— Այս կողմ համեցեք, այս կողմ համեցեք, ո՛վ է ուզում
 լավ խնձոր, Կախեթի գինի, կարմիր բոգի, պան, պան, պան, պան:

— Շաքար ունիս, խանութպան յեղբայր, հարցրեց տատիկը:

— Ինչքան քեֆդ ուզի, տիկին, պատասխանեց խանութպանը:

— Լավ, մի հինգ արշին տուր:

Փոքրիկ խանութպանի ծիծաղը յեկավ:


— Ներեցեք, տիկին, մենք շաքարը արշինով չենք ծախում, ասաց նա քաղաքավարի կերպով:

— Հապա ինչո՞վ, հարցրեց տատիկը:

— Ֆունտով:

— Ֆունտով: Հա, ճիշտ վոր: ասաց տատիկը: Դեհ, խնդրեմ, ինձ հինգ ֆունտ շաքար տուր, յերկու ֆունտ ել գինի:

— Ներեցեք, տիկին, ժպտաց խանութպանը, մենք գինին ֆունտով չենք ծախում:



— Հապա ինչո՞վ, հարցրեց տատիկը:

— Դինին ծախում ենք շիշով:

— Շիշով: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ յերկու շիշ գինի տուր, ասաց շիշ ել ձու:

Փոքրիկ խանութպանը այս անգամ արդեն փոթկաց:

— Ներեցեք, տիկին, մենք ձուն շիշով չենք ծախում:

— Հապա ինչո՞վ, հարցրեց տատիկը:

— Ձուն ծախում ենք հատով:

— Հատով: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ տասը հատ ձու տուր, յերեք հատ ել կաթ:

— Ներեցեք, տիկին, կաթը մենք հատով չենք ծախում:

— Հապա ինչո՞վ, հարցրեց տատիկը:

— Կաթը ծախում ենք բաժակով:

— Բաժակով: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ յերեք բաժակ կաթ տուր, վեց բաժակ ել լուցկի:

Յերվանդը ծիծաղու թուլանում եր:

— Ներեցեք, տիկին, մենք լուցկին բաժակով չենք ծախում:

— Հապա ինչո՞վ, հարցրեց տատիկը:

— Լուցկին ծախում ենք տուփով:

— Տուփով: Հա, ճիշտ վոր: Այսոր ինչքան բան սովորեցի: Դեհ, ինձ վեց տուփ լուցկի տուր, չորս տուփ ել կարմիր բոդի:


— Ախար, տիկին, ծիծաղում եր խանութպանը, ո՞վ ե լսել՝ բոդի տուփով ծախեն:

— Հապա ինչո՞վ, հարցրեց տատիկը:

— Բոդի, բոդի... կըմկըմաց խանութպանը ու չիմացավ, թե ինչով ծախի բոդի:

52. Անցա՛ն

Ե՛յ ջան, անցան
Բուք ու բարան,
Ձմեռ պապին
Ձյունի հետ.
Հոգն ե խաղում
Մար ու դաշտում,
Ողբ պայծառ
Բուրավետ:
Հրես կըզան
Շարան-շարան
Նախշուն հավքեր



Յերգեցիկ.
Դաշա ու անտառ,
Այդի ու սար
Շոր կը հաղնեն
Գեղեցիկ:
Ե՛յ ջան, շուտով
Կը գա գարուն
Ցանկալի,
Կանաչ տերև,
Խաղ ու ծաղիկ
Կը բերի:

53. Ծիծեռնակի հիշողությունը

Ծիծեռնակը բուն եր շինում,
Յե՛վ շինում եր, և՛ յերգում,
Ամեն մի շուղ կայցնելիս՝
Առաջվան բունն եր հիշում:

Մեկ անգամ եր նա բուն շինել,
Յե՛վ շատ անգամ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին
Բունն ավերակ եր գտել:

Այժմ նորից բուն եր շինում,
Յե՛վ շինում եր, և՛ յերգում,
Ամեն մի շուղ կայցնելիս՝
Առաջվան բունն եր հիշում:

Նա հիշում ե անցած տարին
Իր անուցած ճագերին,
Վարոնց ճամփին հափշտակեց
Արյունաբուր թշնամին:

Բայց նա կրկին բուն եր շինում,
Յե՛վ շինում եր, և՛ յերգում,
Ամեն մի շուղ կայցնելիս՝
Առաջվան բունն եր հիշում:



54. Յորեն, գարին ու կորեկը

1.

Ի՞նչ լավ է այստեղ դաշտում, ի՞նչ ազատ է ողջ մաքուր, յերկինքը պայծառ, ասաց կարճ մրահատ ցորենը գարուն:

— Ճիշտ է, ճիշտ, պատասխանեց գարին:

— Հազիվ ազատվեցինք այս մութ ամբարից, ամբողջ ձմեռն իրար վրա ելինք թափված, վաղ ոգ կար, վաղ լույս, խեղդվում եյինք:

— Ի հարկե, գիրուկ, այստեղ լավ է: Տես, ինչպես գյուղացին գոգնոցի միջից սերմերն առած՝ շաղ է տալիս, ցանում է. բայց այդ հով մեր կողքին ընկած. տես, ինչպես փոքրիկ, կլոթ ու պաղղուն է:

— Դու հով ես, հարցրեց գիրուկը:

— Յես կորեկի հատիկ եմ, ասաց նա. ուրախ եմ, վոր ձեզ մոտ ընկա, ձեզ ընկեր յեղա:

— Այս ի՞նչ գաղան է, գիրուկ, ո՞յ, ո՞յ, յես վախենում եմ. տես, ինչպես նա սերմեր հավաքում, ուտում է, ասաց կարմրահատն ու կուլ յեկավ:

Լավ եր՝ գյուղացին յեկավ, ազոավը թռավ. թե չե՝ ցորենի սիրտը կը ճաքեր:

Մեկ էլ տափանն յեկավ, բութ սերմերը հողի տակ արավ:

— Յես կորն, յես կորն, ասաց գիրուկը:

— Յես խեղդվեցի, յես խեղդվեցի, կանչեց ցորենը:

— Ի՞նչ մութն է, ինչ ցուրտ է, կանչեց կորեկը: Նրանք քնեցին:

2.

Անձրևը մաղեց, յերկիրը թրջվեց, պայծառ արևն էլ հողը տաքացրեց. սերմի հատիկները քիչ-քիչ թրջվեցին, ուռան, մեծացան: Նրանք մեծացան, այնչափ մեծացան, վոր բարակ կեղևը ճաքեց, պատասխանեց, ծիլեր դուրս յեկան:

— Բարև ձեզ, ծիլեր, ասաց քամին, նրանց համբուրելով:



3.

— Վորչափ ուրախ եմ, վոր լույս եմ տեսնում, մաքուր ող շնչում, ասաց գիրուկը:

— Յես էլ ուրախ եմ, կանչեց ցորենը:

— Դու էլ դուրս յեկա՞ր, նոր ընկեր կորեկ, ասաց ցորենը:

Այս շատ լավ յեղավ, վոր մեկտեղ ծլեցինք, մեկտեղ դուրս յեկանք:

— Տես, ինչպես սիրուն է յերգում արտուր:

Տես, ինչպես լորն իր բունն է շինում:

Ի՞նչպես արև է, ինչպես լավ տաք է:

Ել մենք չենք մրսի, մենակ չենք լինի: ինչպես կանաչ է, ամեն տեղ կանաչ:

— Բարի լույս ձեզ, ուրախ կանաչներ, ասաց ցորեկը և նրանց համբուրեց:

Արևի տակ ծիլերն ու ցողը դույն գույն փայլեցին, գրկախառնվեցին:

— Ի՞նչ լավ է ծլել իմ ցանած արտը, ասաց գյուղացին:

Անցավ գարունը, յեկավ ամառը:

Գարին ու ցորենը հասկեր կապեցին, լցվեցին ու մեծացան:

Կորեկն էլ շատ-շատ հատիկներ շաքեց:

— Առատ հունձ կը տա, ասաց գյուղացին և ուրախացավ:

55. Արագիլ

Արագիլ, բարով յեկար, Հայ, արագիլ, բարով յեկար. Դու մեզ գարնան նշան բերիր, Մեր սրտերը ուրախ արիր: Արագիլ, յերբ գնացիր, Դու մեզանից յերբ գնացիր, Հա փչեցին բուք ու բորան, Ծաղիկները ամեն տարան: Արագիլ, բարով յեկար, Հայ, արագիլ, բարով յեկար, Բունըդ շինի դու մեր ծառին, Մեզ մոտ մնա ամբողջ տարին:



56. Արևի հրամանը

Գարնանային մի սիրուն առավոտ արևը բարձրացավ ու առաջ ասողներին.

— Դե, սիրուն առաղիկներ, յերկնքի ճրագներ, հիմա գնացե՛ք, գիշերը յեկե՛ք:

Ծաղիկներին ու թռչնիկներին ասաց.

— Զարթեցե՛ք, ծաղիկներ. զարթեցե՛ք, թռչնիկներ:

Յե՛վ զարթեցին բոլոր ծաղիկները, բոլոր թռչնիկները:

«Յես պիտի յերգեմ», ասաց արտուտը:

«Յես պիտի ծաղկեմ», ասաց վարդը:

«Իսկ յես ի՞նչ պիտի անեմ», ասաց մուխ ամպիկը. «չըջը՛ջրեմ յերկիրը»:

Արևը պատասխանեց.

— Թող յերգի արտուտը, թող բացվի վարդը, իսկ մուխ ամպիկը, ջրով լի՞քը, թող դնա, հեռանա:

Ծաղիկները բացվեցին, թռչնիկները յերգեցին, յերեխաներն էլ զարթեցին և սկսեցին արևի յերգը.

Արև, արև, յեկ, յեկ,

Զիզի քարին վեր յեկ,

Կարմիր արև, յեկ, յեկ,

Նախշուն քարին վեր յեկ:

57. Անճոռնի ճուտիկը

1.

Յերեք շաբաթ թուխսը վեր չեր կենում ձվերի վրայից: Ծուռները արդեն դուրս եյին յեկել, մուռն էր միայն մի կանաչավուն փոքրիկ ճու՛ռ:

Վերջապես մի առավոտ թուխսը նկատեց, վոր ձվի ներսից մեկը թրխթրխկացնում է: Իսկույն շարժեց ճուռն կտուցով ու մի՛ջից դուրս յեկավ ճուտիկը:

Սա նման չեր իր յեղբայրներին ու քույրերին: Ավելի բրդոտ էր, ավելի դեղին, տոտիկները կարճ-կարճ, գլուխը լայն, կտուցը տափակ:

«Այս ի՞նչ անճոռնի յե», մտածեց մայրը, մի քիչ տխրեց, բայց շուտով ինքն իրան սիրտ տվավ, թե փոչինչ, կը մեծանա, կը գե՛ղեցկանա:

Հավաքեց իր բոլոր ճուտիկներին ու հպարտ-հպարտ կոբխկա՛լով գնաց բակը: Փոքրիկները աշխուժ ու արագ վազվզում եյին նրա շուրջը. միայն նորածինը քայլում էր ծանր ու որորվելով:

Մայրը տարավ նրանց առվի ափը քուջուջ անելու: Անճոռնի ճուտիկը շուրը տեսավ թե չե՛ր ընկավ մեջը:

Մայրը տարափած ճուռն էր, կանչում, թևերը թափ տալիս, նետվում դեպի շուրը:

Ծուռիկներն էլ ծվում եյին, գես ու գես ընկնում:

— Ոգնեցե՛ք, յեղբայրիկը խեղդվում է:

Ամբողջ բակը իրար անցավ. հավերը կըչկըչացին, աքլորը բարձր ծղրտաց, փքված հնգկահաջն էլ ամուր դուզդուզում էր:

Իսկ անճոռնի ճուտիկը շարժում էր իր թաղանթավոր թաթե՛րը ու հանգիստ լող տալիս ջրի յերեսին:

Պառավ նանը լսեց թուխսի ճիչն ու բակի աղմուկը, դուրս վազեց, տեսնի՛ ինչ է պատահել: Ու խփեց ծնկանը:

— Վա՛յ, կուրանամ յես, ես ի՞նչ եմ արել, հավի տակը բաղի ճուռ յեմ դրել:

58. Գյուղացին ու արջը

1.

Գյուղացին իր բոստանում դարնանը սերմ էր ցանում:

Արջը յեկավ. «Բարև բեզ,

ի՞նչ ես անում բեզ ու քեզ.

արի, այ մարդ, միանանք,

մեկտեղ անենք վար ու ցանք.

վար ու ցանքը մեր կիտրար,

հունձն էլ անենք հավասար»:

— Աչքիս վրա, արջ ախպեր,

ոտար խոմ չե՛նք. կուգես, բեր

հենց առաջին անգամը,

ցանենք մոտիս շաղկամը:

Ինձ արմատը հողումը,

քեզ փրերն ու ցողունը:

2.



Քաղցր ու խոշոր շաղկամը

հողում տուղեց աշնանը:

Մեր ապերն ու գյուղացին

շաղկամն հողից հանեցին:

Ապերն առավ փրերը,

արմատներն էլ ընկերը:

Արջը տեսավ, վոր խաբվեց,

մարդու դեմը քիչ լարվեց:

«Վայ, ինձ խաբէ գյուղացին.
կաց, են մյուս ցանոցին,
ինչ վոր ցանենք հողումը,
նրան կը տանք ցողունը»:

3.

Մյուս տարի ցանոցին
արջին սասց գյուղացին.
— Ախպեր, արի մենք ելի
մի բան ցանենք կիսովի:



Արջը թե՛ «հա, շատ բարի,
միայն անշուշտ՝ ես տարի
ինձ արմատը հողումը,
քեզ փրերն ու ցողունը»:
Համաձայն՝ եմ յես նորեն,
ես հետ ցանենք մենք ցորեն:
Մարդը գիտեր իր բանը,
ապօրը հետ՝ իր տանը

ցորենն ածեց տոսրակը,
տվեց նրա շալակը.
ու ցանեցին են արտը
բրդոտ աղերն ու մարդը:

4.

Ընկերները հունիսին
արտն հնձեցին միասին:
Հասկերն ընկան գյուղացուն,
արմատն ընկավ սարեցուն.
արջը ել չը համբերեց,
ետեղ մի լավ փրփրեց.
արդեն սաստիկ նեղացավ,
թքեց, մարդուց հեռացավ:

Ու են որից մինչև հիմի
շատ է մարդուն թշնամի:



59. Վորը ձագուկը



Մանուկներ

Միրուն ձագիկ, չունես մայրիկ
Կամ թե հայրիկ, վոր թռչում ես
Որոր-մուր մեր չորս բոլոր:

Ձագուկ

Ուրուն այսօր տարավ իմ մոր:

Մանուկներ

Յեկեք, քույրեր ու յեղբայրներ,
Ընկենք սարեր ու անտառներ.
Գնանք, գանենք, խնդրենք մեկի,
Վոր մայր դառնա այս խեղճ ձագին:
— Միրուն հավքեր, յերկնից հավքեր,
Առեք ձեզ մօտ ձագին անտեր:

Կիտ

Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ:

Մանուկներ

Ձե՛, կրկու, ուրիշի բնում
Ձու յես գնում, մայր չես դառնում:
Ագռավ

Կո՛ւ, կո՛ւ, կո՛ւ...

Մանուկներ

Ձե՛, չե՛, ագռավ, գոշ գիշակեր,
Քեզ չենք հանձնիլ, մի՛ կռավիր:

Կռունկ

Կըռճ, կըռճ, կըռճ...

Մանուկներ

Ձե՛, չե՛, կռունկ գարնանասեր,
Մեր յերկրում կա ցուրտ ձմեռ:

Տաւրակ

Վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ...

Մանուկներ

Ձե՛, չե՛, տաւրակ,
Գիտենք, լավ ես,
Ազնիվ հավ ես,
Բայց լալկան ես:



Ձագի մայրը

Մարդն ուրուրէն սպանեց,
Ինձ ճանկերից աղատեց,
Տըվեք ձագս, խնդրում եմ,
Ո՛վ ե գտե՛ր, փնտրում եմ:

Փանուկներ

Ա՛ռ, ա՛ռ, մայրիկ,
Քո խեղճ ձագիկ,
Սիրուն ծիտիկ,
Վոր չթուշի ուր-մուր
Մեր չորս բոլոր:
Ձագուկ, ձագուկ, ուրախ կաց,
Մորդ գնա գրկաբաց,
Հետը թռի՛ր, հեռացի՛ր,
Անցած ցավդ մոռացի՛ր:



60. «Պողոս-Պետրոս»

1.

Վաղմւյ, յերբ մօտ եր յերկրին յերկինքը
ու լսում եր դեռ մարդկանց Տերն-Խնքը,
այն լավ ժամանակ յերկու մանուկներ
ունեյին մի շար, մի անսիրտ խորթ մեր:

— Կորեք, դնացեք, աշխատանք արեք,
աշխատանք արեք ու բերեք, կերեք:
Ինչ եք թափթըփել անգործ ու անբան,
հասած տըղերք եք հինդ-վեց տարեկան...

Այսպէս բարկացավ մի որ խորթ մերը,
ճիպտաներ տվավ, զբրկեց հորթները:
Անհանգիստ հորթներ, ամառվան շոք որ՝
կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:
Նրանց յետեից, լալով, հեալով՝
փոքրիկ վորբերը քարեքար գալով՝
վազ եյին տալի անտառի միջում:
Վաղ եյին տալի ու իրար կանչում:

— Պողոս, գտմը:
— Չէ՛հ:
— Պետրոս գտմը:
— Չէ՛հ:
— Վայ-վայ, վնւյ-վնւյ...
— Վայ-վայ, վնւյ-վնւյ...

Շատ վոր ման յեկան, խեղճերն հոգնեցին:
յեկան խորթ մորը լալով պատմեցին:

— Նանի, այ նանի, կորան հորթները...
— Վայ, զետինն անցնեք, ճըշաց խորթ
մերը:

— Թող դնւք կորչեյիք հորթերի տեղակ
անտակ ձորի մեջ, անշարժ քարի տակ:
Մի արջ պատաներ, մի գազան, մի գել,
վոր չեյի տեսել ձեր շուքը մեկ ել...
Դե, յեա գնացեք, դնացեք, կորեք:
մինչև չգտնեք հորթները բերեք՝
աչքիս չերևաք, այ աչքիս փչեր,
թե չե կը սպանեմ յեա ձեզ այս գիշեր...
Ու ճիպտան ել յեա իրենց թաթերին:
հոգնած ու սոված, արցունքն այտերին,
փոքրիկ վորբերը՝ անտառի միջում,
գիշերվան կիսին լալիս են, կանչում:

— Պողոս, գտմը:
— Չէ՛հ:
— Պետրոս գտմը:
— Չէ՛հ:
— Վայ-վայ, վնւյ-վնւյ...
— Վայ-վայ, վնւյ-վնւյ...

3.


Անանք հորթները չկան ու չկան:
Ճարները կտրած խեղճերը յեկան,
լալով չոքեցին:

— Տէր Աստված, ասին,
Ինչ կըլի, գթաս՝
գտնե թներ տաս,
թներ տաս՝ թըռչենք,
թըռչենք ու կորչենք,
վոր ել չտեսնի մեզ մեր խորթ մերը,
մինչև վոր գտնենք կորած հորթները...
Հենց ասին-չասին անմեղ բերանով,
Աստված վորոտաց իր գթոտ ձայնով:
— Ահա ձեզ թներ, սիրուն յերեխեք,
թռչուններ դառեք, թռած ման յեկեք:

Վոր ել չտեսնի ձեզ ձեր խորթ մերը,
մինչև վոր գտնեք կորած հորթերը:
Գիշերը քնեք ծառերի նուրբին,
ծեղն ու ծղոտը արեք անկողին,
ապրուստ ել կերեք իմ յի սեղանից,
յերբ վոր դատարկուն յեղաք ձեր տանից...


4.

Այսպես վերեից հենց կանչեց Աստված,
փոքրիկ վորբերը փոխվեցին հանկարծ
ու թևեր առան,
թռչուններ դառան.
ու թևեր առած՝
թռչուններ դառած՝
գեռ մինչև այսօր,
ընկած սար ու ձոր,
ծրվում են, մրնչում,
մեկ մեկու կանչում.
— Պողոս, գտար:
— Չե՛հ:
— Պետրոս, գտար:
— Չե՛հ:
— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...
— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ...



61. Գարուն

Ջուգվել են կրկին
Անտառ ու այլի,
Վշտում ե ուժգին
Ջուրը գետակի:



Վերը սիրուն
մերզ են կաղմել
տում ու դաշտում
ըզ ու հորովել:

Թիթեռներն ուրախ
Թռչում են դեռ-դեռ...
Ջան, տեսքիդ մատաղ,
Գարուն ե արգեն:

62. Արևն ու ծիածանը

Անձրեից հետո ամպերի տակից դուրս նայեց փայլուն արևը.
լերկնքի վրա յերևաց գունավոր գեղեցիկ ծիածանը: Նա գեղեցիկ
էր, այնքան գեղեցիկ, վոր ամեն մարդ կանգնած նայում էր ու
հիանում: Ծիածանը հպարտացավ և պարծեցավ, թե ինքն արևից
էլ գեղեցիկ է:

— Ճշմարիտ ե, դու գեղեցիկ ես, ասաց արևը. բայց ո՞վ ե
ապրիս քեզ այդ գեղեցիկութունը:

Ծիածանը չհասկացավ արևին ու ծիծաղեց նրա վրա: Արևը
բարկացավ, մտավ ամպերի տակ, ծիածանն էլ անհետացավ:

Այն լինն ե՝ Խաչի ունեւ, քաւի տալ յի յինի,
Վոսկի ունեւ, հաւեւել յի յինի:

63. Մանուշակ

Կապույտ դիտով, կանաչ վոտքով,
Յեւ ծաղիկ եմ անուշ հոտով:
Թեյն տունիս փոքրիկ ե, դա՛ծ,
Թփերի տակ միշտ թաք կացած,
Բայց իմ փունջն ամենի տան,
Թե աղքատի, թե մեծատան,
Իբրև դարնան առաջին զարդ,
Տեսնում ե միշտ ամեն մի մարդ:
Յեւ եմ սիրուն դարնան գուշակ,
Իմ անունս ե մանուշակ:



64. Տերևները

1.

— Մենք ծառերի զարդն ու դարդարանք ենք, ասացին տերևները. առանց մեզ ինչի՞ նման կը լինին ծառերը. մենք սիրուն ենք, կանաչ ենք. մեր ստվերի մեջ մարդիկ, կենդանիները հանգիստ են առնում. մեր ստվերի մեջ ամեն մի թռչուն իր բունն է շինում, իր բունն է շինում, ուրախ յերգ յերգում:

Մենք ենք ծառերին կյանք տվողը, զարդն ու դարդարանքը:

2.

— Ինչ ել վոր ասեք, իրավունք ունեք, ասացին արմատները. մենք ձեզ խնդրում ենք, մի քիչ ցածրացեք, քիչ ներքև նայեցեք և դուք կը տեսնեք, թե մենք ինչ բան ենք, ձեզ ինչ ենք տալիս: Աշնան վերջին դուք ել կը թափվեք, ձեզանից հետո յեկող տերևներին ելի կյանք կը տանք, ելի կը պահենք, և այսպես շատ-շատ տարիներ: Հիմա ել կասեք, վոր միայն դուք եք զարդ ու դարդարանք ու կյանք տվողը:



65. Պառավին ու այծը

Կար չկար յերբեմն

Մի աղքատ պառավիկ,

Ունեք մեր պառավը

Կաթնատու այծիկ:

Չալիկ-մալիկ, կաթնատու այծիկ:

Պառավը ձմեռը

Այծիկը պահեց.

Իր բերնի պատառը

Նրա հետ կիսեց.

Սիրով, հոժար, նրա հետ կիսեց:

Ցերք վոր ձյունը հալվեց,

Բուսավ կանաչ խոտ,

Պառավը իր այծիկը

Դուրս տարավ արոտ:

Ուրախ, գվարթ դուրս տարավ արոտ:

Թանձր մառախուղը

Գետինը պատեց,

Պառավը առջևից

Այծիկը կորցրեց.

Ավա՛ստ, ափա՛ստ, այծիկը կորցրեց:

Պառավը լաց յեղավ,

Իսկ դայրը փռնաց,

Մղորված այծիկը

Բարձր մըկըկաց.

Մըկը՛կ, մըկը՛կ, այծը մըկըկաց:

Դայրն իսկույն մոտեցավ,

Այծին շալակեց.

Պառավը յեանից

Բարձրաձայն դռչեց.

«Հայ-հայ, վայ-վայ», բարձրաձայն դռչեց:

Խեղճը մնաց կանգնած

Մի փունչ խոտ ձեռին,

Անմխիթար ձայնով

Կանչելով այծին:

«Յեկ-յեկ, յեկ-յեկ», կանչելով այծին:

66. Մարտ

Ա՛խ, այսպես ել գիժ ամիս.
 Մարդու հանգիստ չի տալիս:
 Այսօր ուրախ որ կանի,
 Վաղը անձրև ու քամի.
 Առավոտը պայծառ որ,
 Կեսորը մութ ու ամսոտ:
 Մին հագնում ե սալիտակ,
 Մին կանաչին ե տալիս.
 Մի որ ցուրտ ե, մի որ տաք,
 Մին խնդում ե, մին լալիս...
 Ա՛խ, այսպես ել գիժ ամիս:

67. Գդալ-փոխ

Ամառն եր: Հունձն ընկել եր: Մի լուեցի ե մի աշտարակցի
 միասին հունձ եյին անում: Ծաղի ժամանակ նրանց համար մա-
 ծուն բերին մի մեծ ամանով. բայց յերկու գդալի տեղ մեկն եյին
 բերել:

Յերբ վոր մածնի բրթունքը պատրաստեցին, աշտարակցին
 ասաց.

— Գդալը մեկ հատ ե, արի գդալ-փոխ անենք, գդալ-փոխ
 ուտենք:

Լոռեցին չհամաձայնեց, ասաց.

— Թող յես գդալով ուտեմ, դու ձեռով կեր:

— Վո՛չ, պատասխանեց աշտարակցին, վորովհետև գդալ-փոխ
 չես ուզում, արբ մեկ բան ասեմ, այնպես անենք: Ով վոր մե-
 զանից յոթ գյուղի անուն տա վրա-վրա, շուտ-շուտ, գդալով նա
 ուտի:

— Լավ, առաջ յես կասեմ, ասաց լոռեցին ու սկսեց.

— Հի՛, Լո...ռի, հի՛, Ո՛ւ...ղուն...լար...

Լոռեցին միայն յերկու գյուղի անուն տվավ, այն ել չկարո-
 ղացավ շուտ-շուտ ասել ու սուս կացավ. հետո աշտարակցին
 սկսեց ե կարկուտի պես վրա տվավ:

Ուշի-Ուշահան,

Փարսի Բուրահան,

Թալին Թալիչ,

Մասաարա,

Գդալի պոչը դեսն արա:

Ասեց, գդալն առավ լոռեցու ձեռքից: Լոռեցու բերանը մնաց
 բաց. բայց ել ինչ կարող եր անել. խաղը տանուկ եր տվել:

68. Պարզամիտ հովիվ

Ոգոստոսին եր թե հուլիս ամսում—լավ չեմ հիշում,— մի
 անմեղ հովիվ քաղաք չտեսած, իր յերկայն մահակն ուսին դրած,
 մտավ բազարը խլրչկոտալով, դարմանալով:

Խրտնած պախրի պես շատ դեռ դեն ընկավ, վերջը կանգ
 առավ մրգավաճառի խանութի առջև ե աչքը ձգեց լիք թաբախ-
 ներին, հասուն մրգերին:

Ինչ պտուղ ասես, վոր նա չտեսավ, չհիացավ. տեսակ-տեսակ
 տանձ ու խնձոր, դեղձ ու խաղող, թուզ ու սալոր, նուռ, սեր-
 կելի, ունաբ ու հուն, կարմիր, փայլուն:

Հովիվը նայեց մրգավաճառին ու մնաց ապշած, վոր այնչափ
 հասուն մրգերի միջին ձեռք չեր դպցնում մեկին կամ մյուսին:

«Սա կույր կը լինի», հովիվը կարծեց ե փորձել ուզեց: Մա-
 հակը մեկնեց դեպի մրգավաճառը ե քիչ եր մնում, աչքն եր
 կոխում:

— Ե՛յ, ինչ ես անում, գոռաց մրգավաճառը սաստիկ բար-
 կացած:

— Բա... յես հենց իմացա, դու կույր կը լինիս:

— Ե՛յ, ինչ ես ասում, յես եմ կույր, թե՛ դու:


— Ի հարկե, դու յես, պնդեց հովիվը: Յեթե դու կույր չես
 ե լավ ես տեսնում, բա այդ մրգից ինչի չես ուտում:

69. Կեռասը

1.

— Բարձր յեկար, սիրուն թռչ-
 նիկ, հագար բարով անուշիկ, յեր-
 գիր մեղ համար, ասաց ծառի ծալ-
 րին որորվող կեռասը:

— Այս դիշեր շատ ցուրտ եր,
 յես մրսեցի, այնչափ մրսեցի, վոր
 քիչ մնաց սառչեցի, մեջ ընկավ մի
 ուրիշը. այս մեկ թշկա ինչպե՛ս
 կարմրել ե, իսկ այս մեկը դեռ



սպիտակ ե. ան, քանի քանի անգամ այս տերերն խոսեցին մե-
վոր արևի տուալը չառնի, նա չի լսում:

— Բան չկա, փոքրիկ կեռաս, ասաց թռչնիկը. արևը այդ-
մեկ թշնկեղ ել կը կարմրեն:

Թռչնիկն յերգեց. բոլոր կեռասները հանգիստ լսում, ուրա-
խանում եյին:

— Այ, այ, ոգնեցեք, ոգնեցեք, աղաչեց մի կեռաս, այս
թրթուրն ինձ ուզում ե ուտել:

Թռչնիկը հասավ, կացեց թրթուրին ու կերավ:

— Շնորհակալ եմ, բարի թռչնիկ, շնորհակալ. դու իմ կյանքս
ազատեցիր. այդ թրթուրներն իմ բույրերից շատերին կերան, չո-
քացրին. յես ուզում եմ մեծ, սիրուն կարմիր կեռաս դառնալ:

Փոքրիկ կեռասը քիչ-քիչ մեծացավ, կաս-կարմիր դարձավ:
Նա ուրախ-ուրախ չորս կողմն եր նայում, կարմիր թշնկներն ա-
մենքին ցույց տալիս: Մի որ ել յեկավ պարտիզանը, սանդուխքը
զրեց և կեռասները քաղելով կողովը լցրեց:

— Ինչո՞ւ յեն քաղում, այս ո՞ւր են տանում իմ քույրերին,
զարմացած ասում եր կեռասը: Յես ամենաբարձր ճուղի վերա-
յեմ, ինձ վոչոք չի հասնի:

— Քիչ հետո ծառի վրա կեռաս չմնաց:

— Մենակ տխուր ե, մտածեց կեռասը, ել չարժե տալել:

2.

— Բարե քեզ, բարե, ասաց թռչնիկը. ինչպե՞ս անանում եմ,
մենակ ես մնացել:

— Այո, տխուր ե, ասաց կեռասը, յես շատ ուրախ եմ, վոր
յեկար, մի ասած տեսնեմ, յես գեղեցիկ չեմ, միթե ինձ չես հա-
վանում:

— Յես սիրում եմ քեզ, դու շատ լավն ես, ասաց թռչնիկը:

— Վոր այդպես ե, կացի՞ր ինձ, թող իմ թշնկները քեզ բա-
ժին լինին. դու ինձ կյանք տվիր. քո լավությունը չեմ մոռացել:
Բայց գիտե՞ս՝ ինչ կա, սիրելի թռչնիկ, մի խնդիր ունեմ, այն
ել կատարիր:

— Յես քեզ համար ամեն բան կանեմ, ասաց թռչնիկը:

— Կորեզիա մեջ մի բան եմ գտում. նա պիտի ապրի, ծլի,
մեծանա, մեծ ծառ դառնա: Յերբ դու ինձ ուտես, տար, իմ
կորեզը պարտիզում անկիր:

Պարտիզում դու չես կարող մեծանալ, պատասխանեց թռչնիկը.
Խոտը հնձելիս քեզ ել կը կտրեն: Յանկապատի մեջ մի լավ տեղ
գիտեմ, այնտեղ կը անկեմ, վոր դու մեծանաս, սիրուն ծառ
դառնաս:



70. Յերկու ընկեր

Յերկու ընկեր իրիկնապահին հրացան տուած՝ անտառ դնացին,
վոր մեկ բան վորսան, շուտով յես դառնան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ ու կատաղությամբ
նրանց վրա վազեց, մեկը շտապելով ծառը բարձրացավ, մյուսն
անճարացած գետնի վրա պառկեց, շունչն իրան քաշեց ու անշարժ
մնաց, վոր արջը կարծե, թե նա մեռած ե:

Արջը մոռալով մոտեցավ նրան, ախանջը կամաց դրավ բերնի

վրան, ականջ դրավ, հոտ տռավ: Վերջապես նրան մեռած կար-
ծելով, հեռացավ, գնաց գունչը լիցելով:

Փախած ընկերը ծառիցն իջավ ցած, ընկերին հարցրեց, թե
արջն ինչ ասաց:

— Արջն ինձ պատմիրեց, վոր յես մյուս անգամ քեզ պես
մարդու հետ վորտի չգնամ, վոր մեզ մի վտանգ պատահելիս՝ մե-
նակ չթողնես ու ինքդ փախչես:

71. Մանուկն ու ջուրը

Ամպոտ սարից ուրախ ձենով
Ջուր ե գալիս, անցնում շենով:
Մի թուխ մանուկ գուրս ե վազել,
Ձեռքն ու յերես պաղ լվացել,
Լվացել ե ձեռքն ու յերես,
Ու դարձել ե, խոսել այսպես:

— Դու վոր սարից կուգաս ջրիկ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
Ես այն սարից կուգամ մթին,
Վոր հին ու նոր ձյունն ե գլխին:

— Դու վոր առուն կերթաս ջրիկ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
Ես այն առուն կերթամ դիարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:

— Դու վոր այգին կերթաս ջրիկ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ,
Ես այն այգին կերթամ դալար,
Վոր տերն ե ժիր մեջն այգեպան:

72. Մանուկը ձորում

Սարի տակից ջրջալով
Ջուրն ե վազում ոլոր-մոլոր,
Ջուրն աղբյուրի վճիտ ու զով,
Գնում, թափվում ծաղկունանց ծով:

— Հեյ, աղբյուրի սիրուն ջրեր,
Յես ել լինեմ ձեզ հետ ընկեր:
Տեսե՞ք՝ ձեզ հետ ծաղկածորում
Ինչպես եմ յես ուրախ պարում:

Ջուրիկ-մուրիկ,
Անուշ քուրիկ,
Ախպերդ եմ յես
Սիրում եմ քեզ:

Դու քրջքրջա, յես տաղ ասեմ,
Քեզ հետ մեկտեղ ձորը վազեմ:
Իրար դրկած սարի լանջով
Գնանք, իջնենք ծաղկունանց ծով:

73. Ո՛վ ե ցանում

1.

— Վարժապետ, դուք ցույց տվի՞ր, վոր դարին, ցորենը, կո-
րեկն ու հաճարը մարդիկ են ցանում: Իսկ հապա ո՞վ ե ցանում
անտառի ծառերը, դաշտերի խոտերը, ծաղիկները, հարցրեց Արամը:

2.

— Արշակ, վաղի՞ր, բռնի՞ր այն հովանոցի նման մեծ չոր
բույսը, ասաց վարժապետը:

— Արշակը բռնեց և բերեց:

— Տղայք, ի՞նչն եր տանում այս բույսը:

— Քամին, քամին, կանչեցին ամենքը:

— Հապա նայեցե՞ք և ասացե՞ք, ի՞նչ կա սրա ծայրերին:

— Սերմեր, սերմեր:

— Յերը քամին այս չոր բույսը տանում ե, ի՞նչ են լինում
նրա վրայի սերմերը:

— Թափվում են, պատասխանեցին աշակերտները:

— Վորտեղ:

— Այստեղ, այնտեղ:

— Ուրեմն քամին սերմերն ի՞նչ ե անում:

— Քամին սերմերը ցանում ե:

— Այժմ ասացե՞ք, յերը խոտերի, ծաղիկների սերմերը հաս-
նում են, քամին ի՞նչ ե անում նրանց:

— Քամին ջրում, տանում ե նրանց, ամեն կողմ ցանում:

— Ուրեմն բացի գյուղացուց ել ո՞վ ե ցանում:

— Քամին, քամին, կանչեցին աշակերտները:

3.

Մանուկները մտան անտառ:

— Աստղիկ, տես, ի՞նչ ե անում այն թռչունը:

— Խնձոր ե կտցում, խնձոր ե ուտում:

- Տես, տես, վարժապետ, այն մեկն էլ խնձոր տարաւ:
- Այո, Նունիկ, նրանք ուտում են նույնպես տեսակ-տեսակ պտուղներ, մնչ, մորի, հաղարճ և այլն:
- Արամ, այդ պտուղների մեջ ինչ կա:
- Կորիզներ:
- Ճիշտ է, թռչունները տեսակ-տեսակ պտուղներ տանում, ուտում են և շատ անգամ նրանցից կորիզներ են թափում, վորոնցից թփեր են բուսնում:
- Այժմ հասկացա, ասաց Բաբկենը, մեր դյուղի ավերակ վանքի գմբեթի վրա մի մասրի թուփ կա բուսած. նա ծաղկում է, փարմիր մասուր է տալիս. նշանակում է, այնտեղ կամ քամին և կամ թռչուններն են այդ սերմը տարել. այո, վարժապետ:
- Ճիշտ է, պատասխանեց ուսուցիչը:
- Այժմ ասացե՛ք. ուրեմն էլ ո՞վ է ցանում:
- Թռչունները, թռչունները, պատասխանեցին աշակերտները:

4.

Մանուկները շարունակեցին իրենց ճանապարհը, հասան մի գետակի:

— Տղայք, տեսե՛ք՝ ի՞նչ է բերում այս ջուրը:

— Սերմեր, սերմեր, գոչեցին մի քանիսը:

— Ուրեմն ջուրն էլ է ցանում, ասացին շատերը:

Մանուկներն անցան խոտերի միջով:



— Միկիչ, այդ ի՞նչ է կպել շորիդ:

— Աստի սերմեր, պատասխանեց Միկիչը:

— Ուրեմն մենք էլ ենք ցանում, հարցրեց Զարիկը:

— Իհարկե, իհարկե, ասաց Տիգրանը:

— Այո, վրա բերեց վարժապետը. ապա մի անգամ էլ ասացե՛ք, այսօր մենք ի՞նչ սովորեցինք:



74. Հրման կերանք

Իշխա բարձած տանձ, խնձոր,
Յես դնացի Գոմաձոր:

Վերադարձիս մեկել որ
Ճամփին զարկի մի մեծ լոր:

Եդ ահագին մեծ թռչնին

Մի կերպ բարձի իմ իշին,

Ուրախ-ուրախ յեկա տուն,

Կնունք արի իմ վորդուն:

Ել տիրացու, ել տերտեր,

Կնքահեր ու կնքամեր,

Քյոխվակին ու քյոխվամեր,

Գուռ ու գրկից, խնամի,

Ել ինչ թվեմ միառմի,

Յոթը հերանք, յոթը մերանք

Թափանք՝ եդ լորը կերանք,

Հրման կերանք, հրման կերանք:

75. Վախկոտ Հանեսը

Մեկ որ հայրը Հանեսին ուղարկել էր սոխ ջրելու: Հանեսը ջուրն արել էր մարդը, բահը մոտը ցցել, խկ ինքը գլուխը կախ՝ քաղհան էր անում:

Հանկարծ Հանեսի մեջքին մեկը պինդ խփեց: Հանեսը վեր թռավ տեղից, վախեցած, ինչքան ուժ ուներ, սկսեց փախչիլ: Ներս մտավ տուն և չնճատապա պատմեց, թե զոդ է մտել այդին ու իրեն էլ ծեծել:

Հայրը վերցրեց դադանակը ու վազեց այդին: Այգում վուշոք չկար: Սոխի մարդի մոտ վայր էր ընկած բահը: Զուրը տակի հողը փափկացրել էր, բահն էլ վայր էր ընկել ու կպել Հանեսի մեջքին:

Մեկ ուրիշ անգամ Հանեսը յերեկոյան դեմ այգուց տուն էր վերադառնում ու հանկարծ իր յետևից խշշոց լսեց: Ել յետ չնայեց, քայլերն արագացրեց:

Ինչքան նա արագ եր գնում, այնքան մեծանում եր խշշոցը։
Մեկը հալածում եր. Հանեսը սկսեց վազել։ Յետևից յեկողն եւ
սկսեց վազել ավելի արագ և բարձր խշշացնելով։ Քիչ եր մնում
Հանեսի վտաններից բռնեք։

Ճարը կտրած՝ Հանեսը մեջքը տվեց ցանկապատին, ձեռքի
ճիպոտը բարձրացրեց և ասաց.

— Դեհ արի, դեհ արի, այ կը տամ հա, այ տալիս եմ։
Թշնամին չկար. Հանեսը հազիվ ուշքի յեկավ ու այն Ժամա-
նակ միայն նկատեց, վոր իր չուխի փեշին մի փուշ ե կպել։

76. Ամառ

— ՈւՖ, տաք ե, հայրիկ,
Խաղալ չի լինում.
Կարծես վերևից
Կրակ են թափում։

Հայրիկ ջան, ցուրտը,
Ձմեռը լավ եր.
Ախ, յերանի թե
Ամառ չլիներ։

— Այդպես չե, Սուրբիկ,
Ձմեռ թե ամառ
Յերկուսն ել լավ են,
Պետք են մեզ համար։

Ցորեն, թուփ ու թուզ,
Կեռաս հյութալի,
Բամբակ, խոտ, ընկուզ
Ամառն ե տալի...

Սպիտակ ձմեռը
Ճերմակ վերմակով
Բույսի արմատն ե
Պահում ապահով։

Կանաչ ամառը
Այնպես տաքացնում,
Վողջ պտուղներն ե
Հասունացնում։

Ծիրան, սերկևիլ,
Անուշիկ խնձոր,
Տանձ, խաղող, ախիլ,
Նուռ, դեղձ ու սալոր,

77. Կռունկն ու աղվեսը

Աղվեսն ու կռունկն ընկերացան։
Կռունկը բռն շինեց, ձու ածեց, թուխս նստեց, ձագ հանեց։
Աղվեսն ել ձագեր ունեցավ, մայր դարձավ։ Մի որ կռունկը
դուրս գնաց ձագերին կեր բերելու։

Անպահ աղվեսը բռնեց կռունկի մի ձագը, կոլորեց, վիզն ա-
լորեց, անուշ արավ, վոսկոռով կերավ, տեղը բան չթողեց։
Տուն յեկավ կռունկը և ինչ տեսավ։

Աղվեսը լալիս ե ու լալիս, իրան քրքրում ու լալով ասում.
— Կռունկ քուրիկ, այսպես ել անբախտություն...

— Ինչ անբախտություն ե, ինչ ե պատահել, աղվես քուրիկ։

— Բա չես ասի, մեր բալիկը չկա ու չկա։

Այնքան ման յեկա, այնքան ման յեկա՝ չկա ու չկա։

— Ում բալիկը:	Աչքս կուրանա՝
— Մեր բալիկը, ելի:	Փափկամազիկ,
— Ախր վճր բալիկը:	Յերկար-վզիկ,
— Նա, նա,	Յերկար-վոտիկ.

Յերկար-տոտիկ,
Բարձրիկ-մարձրիկ,
Ձայնը քաղցրիկ...
Հորոտ-մորոտ բալիկը...

Դովում եր աղվեսը, իրան
քրքրում, աչքը խփում, հազար
թափում։

— Աղվես քուրիկ, ասում ե
կռունկը. դու ձագի տեր ես, դու
սիրող մայր ես, արցունք մի թափի,
արցունք մի չափի։ Դա ել չար
բախտից, դա ել իմ բախտից։

— Հա, հա, հեկեկում ե աղ-
վեսը, հա, կռունկ քուրիկ, հա,
անուշ քուրիկ, լացը չի ոգնի.
անցածն անցած ե։

2.


Յերկրորդ որը կռունկն ելի
գնում ե ձագին կեր բերելու։

Տնական աղվեսը ելի բռնում ե կռունկի մյուս ձագին, կոլո-
րում, վիզն ոլորում ու անուշ անում, վոսկոռով ուտում, տեղը
բան չի թողնում։

Տուն ե դալիս կռունկը և ինչ ե տեսնում։

Աղվեսը յերեկվանից ավելի դառն ե լալիս, աչքը խփում՝
հազար թափում, իրան քրքրում ու լալով ասում.

— Ախ, կռունկ քուրիկ,	Փուլ դա իր հիմքով,
Քուրիկ ու մերիկ,	Լիքն ե չարիքով.
Իմ աչքը դուրս գա,	Փափկամազիկ,
Աչխարհը փուլ գա,	Յերկար վզիկ,



Յերկար-տոտիկ,
Բարձրիկ-մարձրիկ...

Ձայնը քաղցրիկ...

Հորոտ-մորոտ բալիկդ ել չկա:

Կոռնկն այս անգամ հասկանում ե, վոր ձագերին սւտողը քուրիկ աղվեսն ե, բայց իրան չհասկացողի տեղ ե դնում ու ասում:

— Աղվես քուրիկ, քուրիկ, մերիկ,
Դու ձագի տեր ես, դու սիրող մեր ես,
Կաթդ կը ցամքի, կուրծքդ կը սմքի,
Արցունք մի թափի, արցունք մի չափի:
Դա ել չար բախտից, դա ել իմ բախտից:

— Դու ձիշտ ես ասում, այ կոռնկ քուրիկ. չար բախտի ձեռքից հւմ գնանք գանգատ, հեկեկում եր աղվեսը ու քթի տակ ծիծաղում կոռնկի վրա:

3.

— Աղվես քուրիկ, մի որ ասում ե կոռնկը, իմ ձագերը կորան, տանողի աչքը դուրս գա, քո ձագերն ել մեծացան, իրենց գլխին կապրեն: Արի գնանք, ձեռք ձեռքի տանք, քրոջ նման ման գանք, սրտերս բանանք:

— Ե՛, հւր գնանք, կոռնկ քուրիկ, անուշ քուրիկ:

— Այ, հենց կուգես յերկինք թռչենք, տեսնենք վերեն ի՞նչ կա:

Ի՞նչ ես ասում, քուրիկ, ծիծաղեց աղվեսը, ի՞նչպես կարող եմ քեզ հետ թռչել, յես թե չունեմ, քեզ պես բախտավոր չեմ:

— Ե՛, ի՞նչ անենք, վոր չունիս, յես հո ունեմ, ել ի՞նչ քույրեր ենք, վոր իրար չոգնենք: Նստիր ինձ վրա, միասին թռչենք:

Աղվեսն ինքն իրան մտածում ե. «Ի՞նչ լավ յեղավ, կը գնանք յերկինք, պատահած թռչունը կը խեղդեմ, վեր կածեմ գետին, յետ գալիս ել քուրիկիս ափ ու խափ կանեմ. հ՞ը, սրանից ել լավ բան»:

Աղվեսը նստում ե կոռնկի վրա:

Կոռնկը թափահարում ե թևերը, վեր բարձրանում, գնում ե գնում, հասնում ե յերկնքի յոթը հարկը ու հանկարծ շուռ ե գալիս ողում:

Աղվեսը հանկարծ մեջքի վրա դըլձիկ, ընկնում ե գետին և իրան ջարդում:

Աղվես քուրիկ, ցած գալով ասում ե կոռնկը, այդ ել քո բախտից, այդ ել քո բախտից:

78. Ամպեր

Ամպեր են վազում բարձր լեռներից, խիտ քամու ձեռից, փախչում գնում են, կարծես խրտնում են ծարավ արտերից:

— Կացեք, այ ամպեր, ինչո՞ւ յեք փախչում, անձրև չեք թափում, մեր ծարավ արտեր՝ որեր համրելով՝ ձեզ են սպասում:

— Քամի, դու քամի, խղճա արտերին, թող այդ ամպերին, թող կանգնեն թափեն անձրևի շիթեր, ջրեն մեր արտեր:

Քամին հանդարտվեց, մեղմ անձրև թափեց, արտերը ջրեց: Արտը բարձրացավ, ցողուն արձակեց ու հասկեր բռնեց: Գյուղացին գնաց, տեսավ ու խնդաց:

79. Հնձվորներ

Ահա յեկավ խոտ հարողը

Ուսին դրած գերանդին,

Բոլոր խոտը սա հարել ե,

Բան չի թողել մեր հանդին:

— Այ, խոտ հարող, ասա, տեսնենք,

Դու ինչպե՞ս ես խոտ հարում.

Հեպ, հոպ,

Հեպ, հոպ...

— Սխ, ինչ լավ ե, յեկեք, սովրենք,

Մենք ել այսպես խոտ հարենք.

Հեպ, հոպ,

Հեպ, հոպ:

Ահա յեկավ արտ հնձողը

Ձեռին փայտի մատնոցներ,

Պատրաստել ե սուր մանգաղը,

Պետք ե հնձե մեր արտեր:

— Հնձող յեղբայր, ասա, տեսնենք,

Դու ինչպե՞ս ես հունձ անում:

— Այսպես ահա, լավ նայեցեք,

Ցեա այսպես եմ հունձ անում.

Հեպ, հոպ, հեպ...

Հեպ, հոպ, հեպ...

— Սխ, ինչ հեշտ ե, յեկեք, սովրենք,

Մենք ել այսպես հունձ անենք.

Հեպ, հոպ, հեպ...

Հեպ, հոպ, հեպ...



1.

Ամառվա մի տաք որ եր: Արևի կիզիչ շողերը այրում, խորովում եյին արտն ու արոտը: Դրսում ամեն ինչ լուռ եր: Գյուղի առջևից հոսող վտակի վըշտոցն եր լավում. նա ել եր պապանձվել:

Որվա այդ շոգ պահին բոլոր յերեխաները հավաքվել եյին ձորի գլխին ու նայում եյին ցած: Ներքև, ձորի մեջ կուվում եյին վոգնին ու ոձը:

Կռիվը կատաղի եր: Ոձը սուլում եր, թափչքներ եր անում փշոտ վոգնու շուրջը, բայց վոչ մի կերպ չեր կարողանում բռնել: Վոգնին ել փոքրիկ գլուխը հանում եր ու հարմար ըռպեյից ոգ-

տվում, կծում ոձի մեջքը, փորը, վիզը ու կրծկվում: Վերջին անգամ փշերի միջից հանեց նա գլուխը, հանկարծ բռնեց ոձի պոչը և կրկին կրծկվեց:

2.

Ոձը ինչքան աշխատում եր, չեր կարողա-


նում աղատվի, ցավից փըշաղցնում եր, յերբեմն գլուխն եր մոտեցնում պոչին, յերբեմն մարմինն եր դեռ ու դեռ նետում: Վոգնու փշերը ամուր ու սուր եյին և անխնա քրքրում եյին նրա մարմինն ու գլուխը:

Հետզհետե ոձը թուլացավ, մարմնի վրա բազմաթիվ վերքեր բացվեցին, այլևս չեր սուլում, միայն ցընցվում եր ամբողջ մարմնով:

Վոգնին կրծկված եր ամուր, ոձի պոչը պինդ կծած:

Բավական ժամանակ անցավ, մինչև ոձը բոլորովին անշարժացավ: Արդեն սատկել եր:

Վոգնին բաց թողեց նրա պոչը, զգուշությամբ մի քանի անգամ հանեց իր գլուխը, դիտեց շուրջը, նայեց ոձին, գնաց ու ծածկվեց մոտակա թփերի տակ:



1.

Լինում ե մի սար, են սարում մի ծառ, են ծառում փըշակ, փըշակում մի բուն, բընում յերեք ձագ ու վրեն կըկուն:

— Կռկու, կռկու, իմ կռկուններ, յերբ պիտի դուք առնեք թևեր, թըռչեք, գնաք, ուրախանաք...

Յերգում եր մարիկ կըկուն:

Մին ել, ըհը, Աղվեսն յեկավ:

— Ես սարը իմն ե, ես ծառը իմն ե, ծառում փըշակ կա, փըշակում մի բուն, ես ո՞վ ե յեկել,

տիրացել թաքուն:

Ախ, դու կըկու, հիմար կըկու, քանի փոքրիկ ձագ ունիս դու:

— Յերեք հատ ձագ, աղա Աղվես: — Յերեք հատ ձագ ցույց կը տամ քեզ,

ու չես ասել, դու անամոթ, մինը ծառա զրկես ինձ մոտ:

Ձրգի շուտով մի հատը ցած, թե չե կացինս՝ հրեն սրած, զընամ բերեմ, ծառը կտրեմ...

— Վայ, չըկտրես, Աստված սիրես.

ես մինն ահա, տար քեզ ծառա, միայն թե եսպես, մի ջընջի մեզ բնով-տեղով,

ամբողջ ցեղով:

Խնդրեց մարիկ կըկուն ու ձագերից մինը ձգեց ներքև: Աղվեսը հափ, առավ գնաց:

— Վայ-վայ, դու-դու, իմ լավ կուկու.

վո՞ր սև սարում,

վո՞ր անտառում,

վո՞ր թրփի տակ

կորար մենակ...

Վայ-վայ, դու-դու,

իմ լավ կուկու...

2.

Լաց եր լինում մարիկ կըկուն, մին ել, ըհը՝ Աղվեսը յետ յեկավ:

— Ես սարը իմն ե,

ես ծառն իմն ե,

ծառում փըշակ կա,

փըշակում մի բուն,

ես ո՞վ ե յեկել,

տիրացել թաքուն:

Ախ, դու կըկու, հիմար կըկու, քանի փոքրիկ ձագ ունիս դու:

— Յերկու հատ ձագ, աղա Աղվես:

— Յերկու հատ ձագ ցույց կը տամ քեզ.

այս, չարամիտ, դու ավազակ, ինչ խաբար ե, յերկու հատ ձագ, ինչ, ուզում ես՝ եստեղ զոռով լըցնես ամբողջ կըկուններով...

Ձրգի շուտով մի հատը ցած,

թե չե կացինս՝ հրեն սրած,

զընամ բերեմ,

ծառը կտրեմ...

— Վայ, չըկտրես,

Աստված սիրես,

ես ել առ տար

ու թող դադար:

վերջինը գեթ

մընա ինձ հետ...

Աղաջեց մարիկ Կրկուն ու յերկ-
շորդ ձագն ել ձգեց ներքե:
Աղվեսը հափ, ես ել առաջ ու
գնաց:

— Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ,

ինչի համար

յեկա յես սար,

բուն շինեցի,

ձագ հանեցի...

Աղվեսն յեկավ,

տարավ, կերավ,

յերկու-յերկու,

կուկու... կուկու...

Լաց եր լինում մարիկ Կրկուն:

3.

Ես միջոցին, դա՛, դա՛, դա՛, Ագ-
ռաջն անց եր կենում են կող-
մերով: Լսեց Կրկվի լացի ձայնը:

— Եսպես տխուր ու դար-
հուրիկ ինչ ես լալիս, Կրկու քու-
րիկ:

— Ի՞նչպես չլամ, ա՛ սանամեր: Ու
Աղվեսն յեկավ են սրտամեռ,
գլխիս եսպես փորձանք բերավ,
ձագուկներս տարավ, կերավ:

— Վո՛ւյ իմաչքին, անխելք Կրկու,
ինչպես իզուր խափվել ես դու
սուտ խոսքերից չար Աղվեսի:

Վո՛ւյ թե սարը իմն ե՛ կասի:

Ո՞վ ե տվել են լրբին սար:

սարն ամենքինս ե հավասար...

Ո՞վ կը թողնի՝ վեր կենա՛ նա,
ամբողջ սարին գա տիրանա,
անունը տա սըրած կացնի,

սրան, նրան սուտ վախեցնի,
ու մինն ես որ, մյուսը յերեկ
ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...

Սե գրողի են տարածին

ճվ ե տվել սրած կացին:

Մին ել վոր դա ու սպառնա,

մի վախենա, քըշի, գնա:

Եսպես ասավ Ագռաջն ու թռավ
գնաց: Ահա կրկին Աղվեսն յեկավ:

— Ես սարն իմն ե,

ես ծառն իմն ե...

Հաղիվ եր ասել, Կրկուն բնից
գլուխը հանեց:

— Սուտ ես ասում, դու խաբեբա,
անխելք դադան, անկուշտ, ագահ:

Ո՞վ ե տվել եստեղ քեզ սար:

սարն ամենքինս ե հավասար:

Ի՞նչ ես յեկել, սուտ տեր դարձել:

Յես ել՝ հիմար, ճիշտ եմ կարծել,

ձագուկներս տվել եմ քեզ...

Կորի, գընա՛, դու չար Աղվես,

հերիք ինչքան սուտ ես խափել,

հիմի գիտեմ, չեմ վախում ել:

Կացին չունես՝ ծառը կտրես:

— Ո՞վ ասավ քեզ:

— Ագռաջն ասավ:

— Ագռաջը, լամ:

4.

Ու ագռաջի վրա բարկացած Ագ-
ռաջն վեսը պոչը քաշեց ու հեռա-
ցավ: Գնաց մի գաշտում սուտմե-
ռուկի տվավ վեր ընկավ, իբրեւ
թե սատկել ե:

Ագռաջն ել կարծեց՝ իրավ
սատկել ե, թռավ, յեկավ վրեն վեր
յեկավ, վոր աչքերը հանի: Աղվե-
սը հափ հանկարծ բռնեց:

Ղա՛-ղա՛, դա՛-դա՛,

Աղվես աղա...

— Այ դու կռավան չարալեղու,
վո՛ւյ թե Կրկվին ասել ես դու՝

թե յես կացին չունեմ սըրած...

կացին չունեմ. դե, հիմի կաց...

— Վայ, քեզ մեղա,

Աղվես աղա:

յես եմ ասել, չեմ ուրանում,
ինձ քըրքըրի, ինձ կեր հում-հում,
տուր՝ ինչ պատիժ սիրտդ կուզի,
բայց մի վերջին խոսքս լրսի:
Յես են սարում, հենց դեմ ու դեմ,
ենպես մի թանգ պահուստ ունեմ,
վոր չես գտնի դու քո ողում,
վոչ մի թառում կամ անտառում:

Ինչի՞ համար են ահագին
գանձը կորչի հողի տակին:

Սրի գնանք, հանեմ, տամ քեզ,
ենքան ուտեմ, ենքան ուտեմ...

Թե չլինի ու սուտ դուրս գամ,
յես հոեստեղ միշտ կամ ու կամ...

«Գնանք, ասավ Աղվեսը:

Թե կը լինի, շատ լավ, թե չի-
նի, ելի քեզ կուտեմ»:

5.

Գնացին:

Վերևից թռչելիս Ագռաջը նկա-
տել եր, վոր մի թփում պառկած

եր գյուղացու շունը: Ագռաջը տա-
րավ, տարավ, դուրս բերավ ուղիդ
այն թփի վրա:

— Ա՛յ, ասավ, այս թփումն ե իմ
պահուստը:

Աղվեսը ագահ վրա ընկավ թփին.

շունը վեր թռավ, կոկորդից բըռ-
նեց ու զրավ տակին: Աղվեսը

խեղդվելով սկսավ խրխուլ:

— Ա՛խ, յես... ախ, յես...

զգուշ Աղվես,

փորձանքի մեջ

ընկնեմ եսպես...

Ա՛խ անիրավ,

դու սե Ագռաջ...

— Ինչքան ել վոր լինի զգուշ,

վատի առջև թե վաղ, թե ուշ,

այդ ե պահված, Աղվես աղա,

ղա՛, դա՛, դա՛, դա՛...

Պատասխանեց Ագռաջն ու թռավ:

Ինքն ել ազատվեց, Կրկուն ել...

82. Յերկու այծ

Յերկու կամախոր այծ դեմ ու դեմ յեկան մի նեղ գերանի
վրա, վոր կամուրջ եր ձգած մի գետակի վրայով:

Յերկուսը մեկ անգամից չլին կարող անցնել այդ նեղ կա-
մըրջովը: պետք ե նրանցից մինը յետ կանգնել և մյուսին ճա-
նապարհ տալ:

— Դու յետ-յետ գնա՛, վոր յես անց կենամ, ասաց մեկը:

— Ինչո՞ւ դու չես յետ քաշվում, պարոն, քան թե ինձ ես
առաջարկում, պատասխանեց մյուսը:

— Քեզ ասում եմ, յետ քաշվիր, առաջ յես եմ բարձրացել
կամրջի վրա:

— Ներդողություն կանես, պարոն, գիտեմ, ում հետ ես խո-
սում, վոր դու բարկանում ել ես:

Այժմերը ճակատ ճակատի դարկեցին, իրար գլուխ պատռեցին,
և վերջը յերկուսն ել կամրջից սայթաքեցին, ջուրը թափվեցին:

Ինչ վոր ցամես



«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻՆ Բ. ՏԱՐՎԱ ՅԱՆԿԸ

1. Վեր կաց	3	42. Անտառ	34
2. Փոքրիկի յերազը	3	43. Շունն ու կատուն	35
3. Լուսաբացին	4	44. Գարնան կարոտ	37
4. Մայրիկը	4	45. Արհեստ ընտրող մանուկը	37
5. Կատու	5	46. Աղվեսը բաժանարար	39
6. Մուլի գրազը	6	47. Կանաչ ախպեր	39
7. Մայրասեր վորդի	6	48. Ճնճղուկներ	40
8. Գյուղի գրագետը	7	49. Փոքրիկ մշակը	40
9. Պապը և թռնիկը	7	50. Արոր	41
10. Զուրը փախավ	8	51. Փոքրիկ խանութպանը	41
11. Խուլի այծերը	8	52. Անցան	43
12. Մուլի մեղրը	9	53. Թիծեռնակի հիշողությունը	43
13. Աշուն	10	54. Սպիտակ գարի ու կորեկը	44
14. Ուշկալ ծառ	11	55. Արագիլ	45
15. Պարտիզական ու իր վորդիքը	12	56. Արևի հրաճանք	46
16. Մայրիկը	12	57. Անճոռնի ճուտիկը	46
17. Կույրը և կաթը	13	58. Գյուղացին ու արջը	47
18. Մանկակառն հեքյաթ	13	59. Վորը ձագուկը	49
19. Գյուղացու ձին	14	60. «Պողոս-Պետրոս»	50
20. Գայլը հարկահան	15	61. Գարուն	53
21. Հանելուկ	16	62. Արևն ու ծիածանը	53
22. Ուղան ու եղը	17	63. Մանուշակ	53
23. Զաղացականի ննջարանը	18	64. Տերևները	54
24. Փխոն	18	65. Պառաջն ու այծը	55
25. Սերոբը	19	66. Մարտ	56
26. Հեքյաթասեր յերեսաներ	19	67. Գրալ-փոխ	56
27. Աշնան վերջը	21	68. Պարզամիտ հովիվ	57
28. Ո՛վ և ուժեղ	21	69. Կեռասը	57
29. Զանասեր մանուկը	21	70. Յերկու ընկեր	59
30. Արարի ձին	22	71. Մանուկն ու ջուրը	60
31. Շողկն ու Պեճիկը	23	72. Մանուկը ձորում	60
32. Յերկու խոփ	25	73. Ո՛վ և ցանում	61
33. Սուտառանը	25	74. Հըմա կերանք	63
34. Զորս յեղանակ	26	75. Վախկոտ Հանեսը	63
35. Քեռի Սիմոնի նապաստակը	27	76. Ամառ	64
36. Ուրագ ու սղոց	29	77. Կռունկն ու աղվեսը	64
37. Զաղաց	29	78. Ամպեր	67
38. Զութակահարը	30	79. Հնձվորներ	67
39. Զպուռն ու մրջնակ	31	80. Վոգնին ու ոճը	68
40. Խանութում	32	81. Զարի վերջը	69
41. Ծիծեռնակների չուն	33	82. Յերկու այծ	71

ՀՀ Ազգային գրադարան



NL0248234

4869